

16628

ԿԱՐՍԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐԲ

Հ Ա Մ Կ Կ ( Բ ) Յ Ե Վ Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն  
Ի Շ Խ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն Ա Ջ Գ Ա Յ Ի Ն  
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը

Պ Ե Տ Շ Ր Ա Տ  
Ռ-ԱՋՍՇՐԱՏ ԲԱԺԻՆ

1933—ՑԵՐԵՎԱՆ

323.1

Հ-28

15 JAN 2010

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐԷ 6 SEP 2006


323.1

Հ-22 *uy*

Հ Ա Մ Կ Կ ( Բ ) Յ Ե Վ Խ Ո Ր Յ Ր Դ Ա Յ Ի Ն  
Ի Շ Խ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն Ա Ջ Գ Ա Յ Ի Ն  
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը

514  
37

ՊԵՏՏՐԱՏ  
ՌԱԶՄՏՐԱՏ ԲԱԺԻՆ  
1933-ՅԵՐԵՎԱՆ



3009 933 8 3

**ՀԱՍԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ՅԵՎ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Կապիտալիստական հասարակարգը, — հափշտակության, ճնշման ու բռնությունների հասարակարգը, — անհնար է օտանց ստրկացնելու և ամենադաժան կերպով շահագործելու գաղութային, կախյալ յերկրներին ու թույլ ազգություններին:

«Ճնշված ազգությունների շահագործումը... և մանավանդ գաղութների շահագործումը մի բուռ «մեծ» պետությունների կողմից «քաղաքակիրթ» աշխարհն ավելի ու ավելի մեծ չափով պարազիտ է դարձնում հարյուր միլիոնավոր անքաղաքակիրթ ժողովուրդների մարմնի վրա» (ԼԵՆԻՆ):

Բուրժուազիան ու կալվածատերերն ոգտադործում են աղբային ճնշումը շահույթներ կորցնելու համար, ճնշելու համար հեղափոխական շարժումը և ամբացնելու համար իրենց տիրապետությունը:

Մինչև ատամները զինված իմպերիալիզմը տնորինում է Չինաստանի չորս հարյուր միլիոնանոց ժողովրդի բախտը, սովամահության ու անելանելի չքավորության և մատնում Հնդկաստանի, Մարոկկոյի, Սիրիայի և այլ յերկրների աշխատավորներին:

Հենց միայն Անգլիան իր գաղութներում ունի մինչև 400 միլիոն բնակիչ, վորոնց անգլիորեն շահագործում է թե անգլիական և թե տեղական աղբային բուրժուազիան:

Սվիններով, դադերով, տանկերով են պատասխանում իմպերիալիստները, յերբ ճնշված ազգություններն ամենաթույլ փորձեր են անում իրենց վրայից թոթափելու ստրկացնողների յուժը:

Նույնպիսի իրավազուրկ ու ծանր դրություն մեջ են դառնում աղբային փոքրամասնություններին պատկանող աշխատավորները բուն իմպերիալիստական պետություններում:

«Դեմոկրատական» Ամերիկայում, Յեվրոպայում, գաղութներում, — ամենուրեք, վորտեղ իշխում են կապիտալիստներն ա կալվածատերերը, դոյություն ունեն աղբային ճնշում, աղգա-

յին անհավասարութիւն, աշխատավորներէ բացահայտ կեղեքում :

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ՀԱՄՆ) հնդիկներն ու նեգրերը ստորին ցեղ են համարուում : Հնդիկներէ կենդանի մնացած ցեղերը, վորոնց առաջ պատկանում եր ամբողջ յերկիրը, ստիպուած են այժմ ապրելու առանձնապես նրանց հատկացրած տեղամասերում («Նատակեցութեան սահման») և դուրկ են ստիպուական քաղաքական իրավունքներէրից :

Եւ ավելի վատթար դրութեան մեջ են ապրում նեգրերը : ԽՍՀՄ-ում նեգրերի թիվը 10 միլիոնից ավելի չէ : Նեգրերի համար, վորոնք ճնշող մեծամասնութեամբ բնակչոններ են, ստեղծված են հատուկ կանոններ : Նրանք իրավունք չունեն և լեկտրաշարժերով և գնացքներով յերթեկեկ սպիտակների հետ մեկտեղ, իրավունք չունեն սպիտակների հետ ճաշել ընդհանուր ճաշարաններում, հաճախել թատրոններ : Նեգրերի ամուսնութիւնն սպիտակների հետ արգելված է : Նեգրի սպանութիւնը («Լինչի դատաստանը», այսինքն՝ ինքնադատաստանը նեգրի նկատմամբ) համարվում է ամենարնական դործ, վորի համար սպիտակներին չեն պատժում :

Լեհաստանում կազմակերպվում են Փաշխտական Չարդեր՝ բելոռուսների, ուկրայնացիների, հրեաների դեմ :

Արեւմտյան Ուկրայնայում, արեւմտյան Բելոռուսիայում հարկերը չորս անգամ ավելի յեն, քան Լեհաստանի մնացած ճասերում : Պետական լեզուն այստեղ համարվում է լեհականը, չնայած նրան, վոր լեհական բնակչութիւնը կազմում է արեւմտյան Ուկրայնայի և արեւմտյան Բելոռուսիայի բոլոր բնակիչների 30 տոկոսից վոչ ավելին : Լեհական իշխանութիւնը փակում է բելոռուսական և ուկրայնական դպրոցները : Այդ պատճառով պանական Լեհաստանի լծի տակ ապրող բելոռուսների և ուկրայնացիների մոտ 65 տոկոսն անդրադետ է :

Յեթ այդ բոլորին ավելացնենք ուկրայնական ու բելոռուսական դուրդի հողային սովը, կալվածատերերի ու կուլակների բռնութիւնն ու ծանակը, լեհական իշխանութեան ճնշման քաղաքականութիւնը, ապա պարզ կլինի, թե ինչու ավելի ու ավելի հաճախակի յեն տեղի ունենում ապստամբութիւնները արեւմտյան Ուկրայնայի և արեւմտյան Բելոռուսիայի յերկրներում :

Լեհական իշխանութիւնն ապստամբներին ճնշելու համար դուրս է բերում հեծելադոր գնդացրերով, վոստիկանութեան ջոկատներ, ռազմաֆաշիստական ջոկատներ : Հենց միայն վերջին տարում պատժիչ արշավախմբեր են ուղարկված յեղել 700 դուրդ : Հողարավոր մարդիկ բանտարկված են բանտերում :

Վոչնչացված ու հալածուած են մեծ թվով ազգային գրող-բաներ, միութիւններն ու կոոպերատիւններ :

Վոչնչով ավելի լավ չեն ազգային փոքրամասնութիւնների դրութիւնը Ռումինիայում :

Ռումիններն ամբողջ յերկրում կազմում են բնակչութեան 2/3-ից վոչ ավելին, իսկ Բեսարաբիայում, վորը 1918 թվին խլել են ԽՍՀ Միութիւնից և բռնի միացրել են Ռումինիային, ռումինները կազմում են բնակչութեան ընդամենը 20 տոկոսը :

Ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ ումինական բուրժուազիան ու բոյարները ճնշման դաժան քաղաքականութիւն են վարում, առանձնապես ծանր ճնշում է կրում Բեսարաբիայի աշխատավոր բնակչութիւնը :

Ճնշման ու հալածուածութեան ազգային քաղաքականութիւնը բուրժուազիան վարում է սոցիալ-ֆաշիստների լիակատար աջակցութեամբ և անմիջական մասնակցութեամբ :

Սոցիալ-ֆաշիստները ստեղծել են դավաճանական թերիտայն մասին, թե կապիտալիզմը դադուլներն է բերում տնտեսական ու կուլտուրական վերելք, վոր առանց կապիտալիստների գաղութները կմատնվէին աղքատութեան և անիշխանութեան :

Սոցիալ-ֆաշիստները, — միջազգային իմպերիալիզմի հավատարիմ ողնկանները, — կատարում են բուրժուազիայի անմիջական առաջադրանքները՝ ջախջախելու ազգային — ազատագրական շարժումը, ճնշելու դադուլային ժողովուրդներին :

Քանի դոյութիւնն ունի կապիտալիզմը, չեն վերանա ազգային հակասութիւնները, վրովհետեւ բուրժուազիան աշխատում է իր դասակարգային շահերից դրդված սերմանել ու հրահրել մի ազգութեան առեւտրութիւնն զեպի մյուս ազգութիւնը :

Վոչնչացնել ազգային ճնշումը կարող է միայն պրոլետարիատը :

Բանվոր դասակարգի պայքարն ազատագրվելու համար կապիտալիստական լծից անխղիւրորեն կապված է ամբողջ աշխարհի աշխատավորներին՝ ազգային ճնշումից լիովին ազատագրվելու համար մղվող պայքարի հետ :

Միայն զանազան յերկրների պրոլետարիատի միացյալ ջանքերով կարելի յէ հաղթել կապիտալի միջազգային իշխանութեանը :

Միայն սոցիալիստական, պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը կհասցնի բոլոր ազգութիւնների աշխատավորների իւրական ու լիակատար ազատագրման :

Միայն կապիտալիստական հասարակարգի վոչնչացումը կլուծի ազգային հարցը :

Իրան որինակ կարող է ծառայել խորհրդային պետութիւնը, վորի պրոլետարիատը տապալել է իր ճնշողներին, — կապիտալիստներին ու կալվածատերերին, — և հաստատել է այնպիսի

Հասարակակարգ, վորի որոք հնարավոր դարձավ ազգութունները լիակատար ազատագրումը, նրանց լիակատար իրավահավասարութունն ու անկախութունը, նրանց յեղբայրական սերս միութունը:

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍԱՆՈՒՄ

Յարական ուժի մի որոք ազգային փոքրամասնութունները աշխատավոր մասսաները գտնվում էյին կրկնակի ճնշման տակ՝ իրենց բուրժուադիակի և իշխող վեյիկոուսական ազգության բուրժուադիակի ճնշման տակ:

Միահեծանութունը դրդուում էր տարբեր ազգութուններին միմյանց դեմ, վորպեսզի շեղի աշխատավորների ուշադրութունն իրենց իսկական թշնամիներից՝ շահագործողներից:

Կառավարութունը հանդիսանում էր հրեյական ջարդերի կազմակերպիչը, ձգտելով այդպիսով իսկ իրենից հեռացնել բնակչության դժգոհութունը և ազգային թշնամության միջոցով թուլացնել հեղափոխական շարժումը: Ընդ աժին կառավարութունը ջարդում էր, իհարկե, հրեյա բանվորներին ու արհեստավորներին, իսկ հրեյական բուրժուադիակի հետ բարեկամութուն էր հաստատում:

Միահեծանութունը ճնշում էր յերկրի բոլոր ազգութուններին՝ Ուկրայնային, Լեհաստանին, Փինլանդիային, Կովկասը, Անդրկասպյան մարզերը և այլն:

Առանձնապես դաժան էր դադութային ուժի մը Միջին Ասիայում: Այնտեղ անվերապահորն և անկոնտրոլ կերպով տնորինում էյին ուսս աստիճանավորները (չինովնիկները), վորոնք իրենց կամայականությամբ դատ ու դատաստան էյին անում: Յարական կառավարության սահմանած կանոնների ամթինափոքը խախտումը ամենածանր պատիժներ էր բերում:

Յարիզմի դաժանութունները ճնշված ազգութունների նկատմամբ այնչափ մեծ էյին, վոր Ռուսաստանում համարյա չէյին դադարում ճնշված ազգութունների խողովութուններն ու սպասամբութունները: Վաթսուն տարի շարունակվեց ցարիզմի պատերազմը Կովկասի բնակչության դեմ:

Միահեծանութունն անինա ճնշում էր այդ սպասամբութունները: Հենց միայն Կադա-կուրգանի (Միջին Ասիա) մի յեղույթի ճնշման ժամանակ ուսական դորքերի հրամատար սպան հրասպարակեց ամբողջ քաղաքում մի հրաման, վորի մեջ ասված էր.

«Ռուս զինվորի մի ներբանը (կոչիկի տակի կաչին) ավելի արժեքավոր է սարթերի (ուղբեկների) հազար գլխից:

Միջասիական ժողովուրդների սպասամբութունների ճնշումը 1916 թվին այնչափ դաժան էր, վոր տեղական բնակչութունը մանավանդ կիրգիզները տասնյակ հազարներով փախչում էյին և կամովին ստրկության վաճառվում չինական վաճառականներին:

Անինա «գաստատաններ» էյին տեղի ունենում նույնպես Բաշկիրիայում, Կադակաստանում և այլ բաղմաթիվ վայրերում:

Յարիզմի դեմ իսկական կազմակերպված պայքար էյին մղում միայն բայլեիկները: Նրանք շողկապում էյին սոցիալիզմի համար պրոլետարիատի մղած պայքարը ճնշված ազգութունների ազգային ազատագրման համար՝ ցարիզմի դեմ մղած պայքարի հետ:

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԵՍՂ ՄՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխութունը, վորը հաղթանակեց բայլեիկների դեկավարությամբ, վերջ դրեց շահագործմանը և վերջնականապես փոչնչացրեց ազգային ճնշումը:

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ որերից Ուրհրդային իշխանութունը ժողովխորհի ղեկերտով, վոր գրեց էր Լենինը 1917 թվի նոյեմբերի 25-ին, հայտարարեց Ռուսաստանի ժողովուրդների լիակատար հավասարութուն, ազատ ինքնորոշման իրավունք մինչև անջատվելը և ինքնուրույն պետութուններ կազմելը ներսոյալ, հայտարարեց բոլոր և ամեն տեսակ ազգային արտոնութունների և սահմանափակումների վերացում, բոլոր ազգային փոքրամասնութուններին ազատ զարգացում:

Ուրհրդային իշխանութունը առաջին իսկ քայլերից դեպի ինտերնացիոնալ միութունն առաջնորդեց առաջներում ճնշված ժողովուրդների բանվորներին և աշխատավորներին: Քաղաքացիական պատերազմի ճակատներում բոլոր ազգութունների աշխատավորներն արյունով զոգվեցին ի մի յեղբայրական ընտանիքի, կովելով ուս-ուսի՝ ընդդեմ բոլոր ազգութունների բուրժուադիայի, ընդդեմ իմպերիալիստական ինտերվենտների:

Նախկին կայսրության տերիտորիայում կազմվեցին 7 սոցիալիստական հանրապետութուն՝ ՌՍՖՍՀ, բելոուսական ՍՍՀ, Ուկրայնական ՍՍՀ, Անդրկովկասյան ՍՍՀ, Ուղբեկստան, Թուրքմենստան և Տաջիկստան: Հենց միայն ՌՍՖՍՀ կազմի մեջ մտնում է 11 ավտոնոմ մարզ:

ՍՍՀ Միութունը հանդիսանում է իրավահավասար ժողովուրդների կամավոր միավորութուն:

1926 թվի վիճակազրությամբ մեղանում կար 180 ազգութուն, վորոնք խոսում էյին 150 տարբեր լեզուներով: Նրանցից 12 ազգութունից ավելին ունի յուրաքանչյուրը մեկ միլիոն հոգուց ավելի, բացի դրանից, 27 ազգութուն ունի յուրաքանչյուրը 100 հազար հոգուց ավելի:

1922 թվի հունիսի 6-ին ԽՍՀՄ Կենտրոնական ընդունելի  
ժյուրիի կողմից սահմանադրությունը:

ԽՍՀՄ Կենտրոնական ապահովում է անգամ ամենափոքր ազ-  
գության իրավահավասարությունը: ԽՍՀՄ Կենտրոնական բազ-  
կացած է Միության կառուցմանը և ազգությունների խոր-  
հրդից: Վերջինս բազկացած է յուրաքանչյուր միության կողմից  
ու ավանդում հանրապետության հավասար թվով ներկայացուցիչ-  
ներից, յուրաքանչյուրից 5 ներկայացուցիչ՝ անկախ նրա բնակ-  
չության քանակից, և մի-մի ներկայացուցիչ բոլոր ավանդում ազ-  
գային մարզերից:

Սոցիալական Միության մեջ ստեղծված են բոլոր պայման-  
ները, վորպեսզի ազգություններից յուրաքանչյուրը կարողանա  
աճել անասական, քաղաքական ու կուլտուրական տեսակետից:

Սոցիալական սահմանադրության գոյության տարբերակում ու  
լենինյան ազգային քաղաքականության կիրառումը ցույց տվեցին  
աշխարհի բոլոր աշխատավորներին, վոր միայն շահագործողներին  
տասալած բանվոր դասակարգն է ընդունակ իսկական ձևով,  
գործնականորեն լուծելու ազգային հարցը հողուտ աշխատավոր-  
ների շահերի, ընդմիջում վրձնչացնելու ազգային անհավասարու-  
թյունն ու ճնշումը:

## ՆՅՈՒԹԵՐ ԻՆՖՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՆՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### Գ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏԸ

ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ՀԱՏՎԱԾՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ  
ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ինչո՞ւ յեր ցարական Ռուսաստանը կոչվում ժողովուրդ-  
ների բանու.

2. Ինչո՞ւ յեր ցարական կառավարությունը մի ազգություն  
գրգռում մյուս ազգություն դեմ.

Նախկին ցարական Ռուսաստանում ամբողջ բնակչության 43  
տոկոսը (այսինքն՝ կիսից պակաս) կաղմում էյին ուսաները և 57  
տոկոսը՝ մնացած ազգությունները: Ռուսաստանում ամբողջ բազ-  
մաթիվ ազգություններ ամենադաժան ճնշում էյին կրում ցարա-  
կան կառավարությունից: Ցարական կառավարությունը թույլ  
չեր տալիս դարձնելու ավանդել այդ ազգությունների լեզու-  
ներով, խլում էր նրանցից հողի հսկայական տարածություններ,  
թույլ չեր տալիս, բացի ուսուց լեզվից, այլ լեզուներով թեթևի

ու գրքերի հրատարակում, հալածում էր ճնշված ազգություննե-  
րի կուլտուրան, վերացնում էր կենցաղային ատոնձնահատկու-  
թյունները (ազգային տարազը, կենցաղի ձևերը և այլն): Ազգու-  
թյուններն արժամարհանքով կոչվում էյին «այլազգիներ» և այդ  
անունով ցարական կառավարությունն ուղում էր շեշտել, վոր նա  
այդ ազգություններին համարում է ոտար, անհավասար, վորոնց  
միայն հանդուրժում է իր պետության սահմաններում:

Ցարական կառավարությունն աշխատում էր թշնամություն  
սերժանել ու բարբոթել տարբեր ազգությունների ներկայացուցիչ-  
ների մեջ: Որինակ՝ նա ատելություն էր ներշնչում դեպի հրեյա-  
ները, տարածում էր դանազան ստոր գրպարտություններ նրանց  
մասին, նա գրգռում էր մի ազգություն մյուսի դեմ, վրացիներին  
ու հայերին միմյանց դեմ, Ադրբեջանում ապրող թուրքերին՝ հա-  
յերի ու վրացիների դեմ և այլն: Այդպիսի քաղաքականության  
միջոցով ցարի կառավարությունը թուլացնում էր ազգու-  
թյունների ուժը և շեղում էր նրանց ուղղությունը ընդհանուր  
թշնամույց և ճնշողից՝ կաղմատերական միապետությունից:  
Այդ ամբողջ քաղաքականությանն այն հետևանքն ունեցավ, վոր  
ցարական Ռուսաստանը, վորը բնակեցված էր մեծ մասամբ վոշ  
ուսու բնակչությամբ, դարձավ «ժողովուրդների բանու»:

Հալածանքի ու ճնշման այդ քաղաքականությունը չեր կարող  
չառաջացնել ճնշվող ու հալածվող ազգությունների մեջ ատելու-  
թյան դրացմունք դեպի այն ամենը, ինչ ուսուական է: Ճնշված ազ-  
գությունների բանվորն ու գյուղացին սկսեցին ատել վորպես  
ճնշողների վոշ միայն ուսու կաղմատերներին ու բուրժուազիա-  
յին, այլև բոլոր ուսուներին՝ անկախ նրանց դասակարգային  
դրությունից: Բայց այլ ազգությունների բանվորի ու գյուղացու  
համար դրան սովեխանում էր նաև ազգային ճնշումը: Յեկ կրկնակի  
ժանրություն, ճնշում՝ դրալով՝ վոշ-ուսու ազգությունների  
բանվորներն ու գյուղացիները հաճախ ի վիճակի չէյին լինում  
հասկանալու, վոր իրենց թշնամին հանդիսանում է վոշ թե յուրա-  
քանչյուր ուսու, և ատավել ևս վոշ թե ուսու բանվորն ու գյուղա-  
ցին, այլ միայն՝ շահագործող դասակարգերը: Ցուրաքանչյուր  
ազգության կաղմատեր ու կաղիտալիստ հանդիսանում են յու-  
րաքանչյուր ազգության բանվոր դասակարգի ու գյուղացիության  
շահագործողները: Յեկ պայքարը շահագործման դեմ, շահագործ-  
ման վոշնչացումը պետք է լինի բոլոր յերկրներին բանվոր դասա-  
կարգի ձեռքի գործը: Պրոլետարիատն ուժեղ է ատաջին հերթին

իր գասակարգային ինտերնացիոնալ համերաշխությամբ և հաղ-  
թում և շահագործողներին, համախմբելով իր ուժերը նրանց դեմ  
մղած պայքարում: Այդ աղաքուցեց նաև Հոկտեմբերյան հեղա-  
փոխությունը, վերը հաղթեց այն պատճառով, վոր նախկին ցա-  
րական Ռուսաստանում բնակվող բոլոր ազգությունների պրոլե-  
տարիաար՝ դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ, հաղ-  
թեց, ու դուրս վանեց ԽՍՀՄ բոլոր ազգությունների կարվածա-  
տերերին ու կոպիտալիստներին:

1917 թվի փետրվարին միապետության տապալումից հետո,  
ժամանակավոր կառավարությունը, վորը բուրժուազիայի կառա-  
վարությունն էր, վոչինչ չարավ ճնշված ազգությունների աղա-  
տազրման համար: Ժամանակավոր կառավարությունը հակառու-  
հում էր ինքնուրույնություն տալու Ուկրաինային, Ֆինլանդիա-  
յին և այլն, շարունակելով այդ տեսակետից նույնպիսի քաղաքա-  
կանություն, ինչպիսին վարում էր ցարական կառավարությունը,  
թեև վոչ այնպես բացահայտ ձևով: Միայն պրոլետարիատի հեղա-  
փոխությունը, — Հոկտեմբերյան հեղափոխությունը, — վերջ տվեց  
ամեն տեսակ ճնշմանն ու շահագործմանը, ազատագրելով բոլոր  
ազգություններին և իրավունք տալով նրանց՝ կոմունիստական  
կառավարության ղեկավարությամբ կառուցելու իրենց քաղաքա-  
կան, տնտեսական ու կուլտուրական կյանքը հոգուտ աշխատավոր  
մասսաների, հոգուտ սոցիալիզմի շինարարության:

## 2. ԼԵՀԱՍՏԱՆԸ ՌԻ ՌՈՒՄԻՆԻԱՆ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԵՏՔԵՐՈՎ

Պատմիք Լեհաստանի ու Ռումինիայի ազգային փոքրա-  
մասնաբյուրեղների դրուքյան մասին, ի լրացումն տարեկ պեր-  
ված նյութերի՝ փաստեր հավաքելով վերջին քերթերից:

«Ժողովուրդների բանա» — նախկին ցարական Ռուսաստանի  
այդ անանք միանգամայն սաղում է այժմ բուրժուական պետու-  
թյունների մեծամասնությանը:

Առաջին տեղն այստեղ զբաղում է Լեհաստանը:  
Լեհաստանի 29 միլիոն բնակչության մոտ 40 տոկոսն ընկնում  
է ճնշված ազգություններին (ուկրաինացիներ, բելոռուսներ,  
հրեաներ, գերմանացիք, լիտովցիներ և այլն): Ազգային փոքրա-  
մասնությունների յուրաքանչյուր ձգտում՝ զարգացնելու իրենց  
կուլտուրան՝ ճնշվում է ամենազաթան ձևով: Բելոռուսական և

ուկրաինական գյուղացիների հողերը խլում են նրանցից և այդ  
հողերի վրա բնակեցնում լեհական «սաղնիկներին», այսինքն՝  
նախկին սպաներին ու յենթասպաներին, վորպեսզի «կրեստանե-  
րում» (ԽՍՀՄ սահմանակից ծայրագավառներում) ստեղծեն հու-  
սալի հենարան: Նման դրությունը բնիկ գյուղացիական մասսա-  
յին մասնում է սովի ու շքավորության:

Ազգային փոքրամասնությունների հալածանքների վառ պա-  
կեր է նկարագրում այն պետիցիան, վոր ներկայացրել են Ազգերի  
Լիգային բուրժուական անդլիական պարլամենտի 61 անդամ,  
վորանց չի կարելի մեղադրել չափազանցությունների մեջ:

«Պատժիչ արշավախմբեր են ուղարկվել 700 գյուղ, հարյուրա-  
վոր խաղաղ բնակիչների ու յերեխաների յենթարկել են ձեծի,  
հաղարավոր մարդիկ բանտերն են լցված, ջարդված ու վոչնչաց-  
ված են մեծ թվով դարադարաններ, միություններ ու կոոպերատիվ  
կրպակներ... Վերջին բնարությունների ընթացքում ուկրաինա-  
ցիք այն աստիճան տերրորի է յին յենթարկված, վոր չորսվեցին  
իրենց ընտրական իրավունքներից... 1920 թվից մինչև 1925 թվին  
ուկրաինացիք կորցրել են 2·607 դպրոց: Ուկրաինացիների յուրա-  
քանչյուր հազար աշակերտից միայն 79 կարող են այցելել ուկ-  
րաինական դպրոց, իսկ 921 ստիպված են այցելելու լեհական  
դպրոցները... Արևմտյան Ուկրաինայում բոլոր դպրոցների 84  
տոկոսը 1925 թվին յեղել է լեհական դպրոց... Արևելյան Գալի-  
ցիայում — Վոլինում մշակված հողերից 200 հազար հեկտար  
հանձնված է լեհական ներգաղթողներին»: Այսպես են դրում մինչև  
իսկ անդլիական բուրժուազիայի ներկայացուցիչները:

Ազգային փոքրամասնությունների ճնշումը Լեհաստանում  
դասակարգային բնույթ է կրում: Նույն այդ ազգային փոքրա-  
մասնությունների բուրժուական շատ սքանչելի կերպով համե-  
քաշում է պիլսուդչինայի հետ և հավատարմությամբ ծառայում  
է նրան՝ ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստության գործում:

Լեհաստանի դաշնակիցը՝ Ռումինիան, նույնպես ավազակա-  
յին ձևով թալանում է գյուղացիական մասսաներին, մանավանդ  
պատերազմից հետո դրաված նահանգների այլ ազգությունների  
գյուղացիությանը:

Ռումինիայի 15 միլիոն բնակչությունից մի յերրորդ մասը  
մարդավայցի, գերմանացի, հունգարացի, ուկրաինացի, բուլղար-  
ներ, հրեաներ, ուղուսներ և այլ ազգություններ են: Ռումինիայի  
կարվածատիրական-բուրժուական կառավարությունը կատաղի

պայքար և մ'զում ուկրայնական կուլտուրայի դեմ Բուքովինայում, ինչպես այդ անում են Լեհաստանում, չընում և բուլղարական գյուղացիներին իրենց հողերից դեպի Դորբուջա ու Տրանսիլվանիա, դորձադրում և սոսկայի տերրոր ու ճնշում՝ զբաղված Բեասարաբիայում և, ինչպես ցարական Ռուսաստանում, պրովախացիոն ձեռք կազմակերպում և հրեյական ջարդեր: Բանվորների ու գյուղացիների հեղափոխական ավելի ու ավելի ուժեղացող շարժման հանդեպ մասը ստիպում և այտուց ևս դերմանական, մաղձաբանական ուսանական և այլ կալվածատերերին ու կապիտալիստներին ստեղծել միասնական ճակատ սուվերենական կալվածատերերի ու բուրժուազիայի հետ՝ ընդդեմ հենց իրենց աշխատավորների:

### 3. ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒՅՑՈՒՆԸ

Մշակիք ստորև բերված հատվածը և ՊԱՏՄԻՐ, ԲԵ ՎՈՐՆ Ե ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ազգային հարցի լուծման ժամանակ լենինիզմը յեղնում և հետևյալ դրույթները.

ա) աշխարհը բաժանված է յերկու բանակի. մի բուռն քաղաքակրթված ազգերի բանակ, վորը Ֆինանսական կապիտալի տեր է և շահագործում և յերկրագնդի ազգաբնակչության հոկա մեծա մասնությունը, և գաղութների ու կախում ունեցող յերկրները շահագործվող ու ճնշված ժողովուրդների բանակ, վոր կազմում և այդ մեծամասնությունը.

բ) գաղութները և կախում ունեցող յերկրները, վոր ճնշում և շահագործվում են Ֆինանսական կապիտալի կողմից, իմպերիալիզմի ուժերի ամենալուրջ աղբյուրներն ու խոշորագույն ուղղիչներն են.

գ) գաղութային և կախում ունեցող յերկրների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարն իմպերիալիզմի դեմ շահագործումից ու ճնշումից նրանց ազատագրման միակ ճանապարհն է.

դ) կարևորագույն գաղութային և կախում ունեցող յերկրներն արդեն թևակոխել են ազգային ազատագրական շարժման ուղին, վորը չի կարող համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամի չհանդեպել.

ե) պրոլետարիան շարժման շահերը պարզացած յերկրներում և աղբյուրներ-ազատագրական շարժումները գաղութներում պահանջում են հեղափոխական շարժման այդ յերկու տեսակների միացումը մի ընդհանուր ֆրոնտով, ընդհանուր թշնամու՝ իմպերիալիզմի դեմ ուղղված.

զ) բանվոր դասակարգի հաղթանակը զարգացած յերկրներում ու ճնշված ժողովուրդների ազատագրումն իմպերիալիզմի լծից՝ անհնարին և առանց ընդհանուր հեղափոխական ֆրոնտի կազմակերպման և նրա ամրապնդման.

է) ընդհանուր հեղափոխական ֆրոնտի կազմակերպումն անհնարին և առանց ճնշված ժողովուրդների ազատագրական շարժմանն ուղակի և վճռական աջակցություն ցույց տալու ճնշող ազդեթյունների պրոլետարիատի կողմից՝ ընդդեմ «հայրենի» իմպերիալիզմի, վորովհետև «չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, վոր ճնշում է ուրիշ ժողովուրդները» (Մարքս).

ը) այդ աջակցումը նշանակում է պաշտպանել, ոգնել, կյանքում իրականացնել ազգերի բաժանվելու իրավունքի, նրանց ինքնուրույն պետական դոյության իրավունքի լողունքը.

թ) առանց այդ լողունքի իրականացման անհնարին և ազգերի համադորձակցությունն ու միավորումը կարգավորել մի ընդհանուր համաշխարհային տնտեսության մեջ, վոր սոցիալիզմի հաղթանակի բաղան և կազմում.

ժ) այդ միավորումը կարող է լինել միայն կամավոր, փոխադարձ համատարմության և ժողովուրդների յեղբայրական փոխհարաբերության հիմունքներով (Ստալին):

### 4. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՂՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև բերված հատվածով ՊԱՏՄԻՐ

ԹԵ ՎՈՐՆ Ե ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ընդ. Ստալինի հետ ամերիկյան բանվորական պատգամավորություն՝ 1927 թվի սեպտեմբերի 9-ին ունեցած զրույցի ժամանակ պատգամավորությունն ի միջի՝ այլոց ավելի հետևյալ հարցը.

«Վորո՞նք են Ռուսաստանի հիմնական տարբերությունները հայկապետական պետություններից՝ ազգային փոքրամասնությունների վերաբերմամբ նրա վարած քաղաքականության հարցում»:

Ընկ. Ստալինն այսպես պատասխանեց այդ հարցին.

«Ըստ յերևույթին խոսքը վերաբերում է ԽՍՀՄ այն ազգություններին, վորոնք առաջ հարստահարվում էին ցարիզմի ու սուսական հարստահարիչ դասակարգերի կողմից և վորոնք չունեին իրենց պետականությունը:

Հիմնական տարբերությունն այն է, վոր հայկապետական պետություններում դոյություն ունի ազգային ճեղքում և ազգային ստրկացում, իսկ մեզանում՝ ԽՍՀՄ մեջ վոչնչացված են թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Մեզանում բոլոր ազգություններն իրավահավասար են, վորովհետև վոչնչացված են առաջներում գերիշխող վելիկոուս ազգի ազգային ու պետական բոլոր արտոնությունները:

Ի հարկե, խոսքն ազգությունների հավասարության դեկլարացիաների մասին չէ:

Ազգերի հավասարության մասին դեկլարացիաներ չառ կան ամեն մի բուրժուական և սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Քանի կոպեկ արժեն այդ դեկլարացիաները, յերբ նրանք չեն կիրառվում կյանքում:

Իման այն է, վոր վոչնչացվեն այն դասակարգերը, վորոնք հանդիսանում են ազգային հարստահարության հեղինակները, ստեղծագործողները և կիրառողները:

Այդպիսի դասակարգեր էին մեզանում կարվածատերերը և հայկապետները: Մենք տապալեցինք այդ դասակարգերը և դրանով ել վոչնչացրինք ազգային հարստահարության հնարավորությունը:

Հենց շնորհիվ այն հանգամանքի, վոր մենք տապալեցինք այդ դասակարգերը, մեզանում իրատես հնարավոր դարձավ իրական ազգային հավասարությունը: Հենց այդ է մեզանում կոչվում ազգերի ինքնորոշման, մինչև իսկ անջատման դադարի իրադրություն:

Վարովհետև մենք իրականացրինք ազգերի ինքնորոշումը, այդ պատճառով ել մեզ հաջողվեց վոչնչացնել ԽՍՀՄ տարբեր ազգությունների աշխատավոր մասաների փոխադարձ անվրաստությունը և կամավոր սկզբունքի հիման վրա համախմբել

ազգությունները դաճակից մի պետության մեջ: Ներկայումս դոյություն ունեցող Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը մեր ազգային քաղաքականության հետևանք է և ԽՍՀՄ ազգությունների մի դաճակից պետության մեջ կամովին ֆեդերացման արտահայտություն:

Հազիվ թե կարիք լինի ասացուցելու, վոր ազգային հարցում այսպիսի մի քաղաքականություն չի կարող իրականանալ հայկապետական յերկրներում, վորովհետև այնտեղ գեա իշխանությունները և կանգնած կապիտալիստները, վորոնք ազգային հարստահարության հեղինակներն ու իրադրողներն են:

Ձի կարելի, որինակ՝ չնչել այն փաստը, վոր ԽՍՀՄ ամենարարժր որդանի, — խորհուրդների կենտրոնիզմի գլուխ կանցնած է վոչ անպատճառ մի ուս նախագահ, այլ վեց նախագահներ, այն վեց դաճակից պետությունների թիվի համեմատ, վորոնք միավորված են ԽՍՀՄ մեջ, վորոնցից մեկը ուս է (Կարլինին), մյուսը ուկրայնացի յե (Պետրովսկի), յերբորդը բելուսուս է (Չերվյակով), չորրորդը՝ ադրբեջանցի (Մուսաբեկով), հիներորդը՝ թուրքմեն (Այտակով), վեցերորդը՝ ուզբեկ (Տայդուլա Սոջայեվ):

Այս փաստը վեր կազգային քաղաքականության ամենափայլուն արտահայտություններից մեկն է:

Հարկ չկա ասելու, վոր բուրժուական հանրապետություններից և վոչ մեկը, վորքան նա ծայրահեղ դեմոկրատական լինեց, այդ քայլը չեր անի: Մինչգեա այդ քայլը մեզ համար ինչն հասկանալի մի փաստ է, վոր բղխում է հավասարության մեր ամբողջ քաղաքականությունից»:

### 5. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆԵ

Կարդա բնկ. Ստալինի 12-րդ կուսիսամագումարում արած գեկուցման առթիվ բնդունված բանաձևից ստորև թերված հատվածը և ՊՏՍԱՄԱՆԻՐ ԱՅՆ ՀԱՐՅԻՆ, ԲԵ

ԻՆՁՈՒՄԻ ՄԻԱՅՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Ե ԱՁԱՏԵԼ ՀԱՐՍՏԱՀԱՐՎԱԾ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Տապալելով կարվածատերերի ու կապիտալիստների, ազգային հարստահարման հիմնական կրողների, իշխանությունը և

Լիխանության գլուխ կանգնեցնելով պրոլետարիատին, Հոկտեմբերյան հեղափոխությունը մի հարվածով կտրատեց ազգային հարստահարման շղթաները, շուտ ավելց ժողովուրդների միջև յեղած հին հարարությունները, վոնչացրեց ազգային հին թշնամությունը, հոգ մաքրեց ժողովուրդների աշխատակցության համար և վստահություն նվաճեց դեպի ուստական պրոլետարիատը նրա ազգային յեղբայրների կողմից վոչ միայն Ռուսաստանում, այլև Յեվրոպայում և Ասիայում: Հարկ չկա ապացուցելու, վոր առանց այդպիսի վստահության ուստական պրոլետարիատը չէր կարող հաղթել կոլչակին ու Գենիկինին, Յուգենչին ու Վրանգելին: Մյուս կողմից՝ կասկած չկա, վոր հարստահարված ազգությունները չեյին կարող հասնել իրենց ազատագրման, առանց Ռուսաստանի կենտրոնում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու: Ազգային թշնամությունն ու ազգային ընդհարումներն անխուսափելի յեն, քանի իլիխանության գլուխ և կանգնած կապիտալը, քանի նախկին «մեծ» ազգություն մանր բուրժուազիան և ամենից առաջ դյուրացիությունը՝ յի ազգայնական նախապաշարումներով, գնում են կապիտալիստների յետևից. ընդհակառակը, ազգային խաղաղությունն ու ազգային ազատությունը կարելի յե ապահովված համարել, յերբ դյուրացիությունը և մանր բուրժուական այլ խավերը գնում են պրոլետարիատի յետևից, այսինքն յերբ ապահովված և պրոլետարիատի դիկտատուրան: Այդ պատճառով խորհուրդների հաղթանակը և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելը հանդիսանում են այն բազան, այն հիմքը, վորի վրա հնարավոր և կառուցել ժողովուրդների յեղբայրական աշխատակցությունը՝ միասնական պետական միություն մեկ:

**6. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

ԳՐԻ ԱՌԻ ԽՍՀՄ սահմանադրությունից ստարև բերված հատվածի հիմնական մտքերը

Սորհրդային (հանրապետությունների պետության գոյանություն ժամանակիանից սկսած աշխարհը բաժանվել և յերկու բանակի՝ կապիտալիզմի ու սոցիալիզմի բանակ:

Այնտեղ, կապիտալիզմի բանակում, — ազգային թշնամու-

ԿԵ  
ԿԻՏ

թյունն ու անհավասարություն, դադութային ստրկություն, շոփինիզմ, ազգային հարստահարությունն ու ջարդեր, ազգայնական դադանություններն ու պատերազմներ:

Այստեղ, սոցիալիզմի բանակում — փոխադարձ վստահությունն ու խաղաղություն, ազգային ազատությունն ու հավասարություն, ժողովուրդների խաղաղ համակեցությունն ու յեղբայրական աշխատակցություն:

Ապարդյուն անցան կապիտալիստական աշխարհի տանյակ տարիների ընթացքում կատարած փորձերը՝ լուծելու ազգայնական հարցը, համեմատելով ժողովուրդների աղատ զարգացումը մարդը մարդու միջոցով շահագործելու սխտեմի հետ: Ընդհակառակն, ավելի յե խճճվում ազգայնական հակասությունների կծիկը, սպառնալով կապիտալիզմի գոյությունն անգամ: Բուրժուազիան անդոր գանվեց կարգավորելու համար ժողովուրդների աշխատակցությունը:

Միայն խորհուրդների բանակում, միայն պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, վորն իր շուրջն և համախմբել բնակչության մեծամասնությունը, հնարավոր յեղավ արմատապես վոնչացնելու ազգային հարստահարությունը, ստեղծելու փոխադարձ վստահության պարագա և հիմք դնելու ժողովուրդների յեղբայրական աշխատակցության համար:

Միայն շնորհիվ այդ հանդամանքների, խորհրդային հանրապետություններին հաջողվեց յեա մղել ամբողջ աշխարհի ներքին ու արտաքին իմպերիալիստների հարձակումը, միայն շնորհիվ այդ հանդամանքների, հաջողվեց նրանց հաջողությամբ վերջ տալ քաղաքացիական պատերազմին, ապահովել իրենց գոյությունը և անցնել անտեսական խաղաղ շինարարությունը:

Սակայն անհետևանք չանցան պատերազմի տարիները: Քայքայված դաշտերը, կանգ առած գործարանները, ավերված արտադրական ուժերը և սպառված անտեսական ռեսուրսները, վոր ժառանգություն են մնացել պատերազմից, անբավարար են դարձնում առանձին հանրապետությունների անտեսական շինարարության համար գործադրած առանձին ջանքերը: Ժողովրդական անտեսության վերականգնումն անհնարին յեղավ հանրապետությունների անջատ գոյությունը:

Մյուս կողմից՝ միջազգային դրություն անկայունությունը և ետր հարձակումների վտանգն անխուսափելի յեն դարձնում՝ կա-



վում և բաղձնակները կուսակցութեան ղեկավարութեամբ, խստիվ փոխում և ազգային ռազմների ու մարզերի ղեկավարը:

Այնտեղ, ուր առաջ իշխում էր վայրենութիւնն ու աղքատութիւնը, այժմ աճում և հուժկու արդունարեութիւնը, ստեղծվում են քաղաքներ, յուրացվում և առաջավոր տեխնիկան, յերևան և զալիս իր ազգային սլոնիտարիատը, կառուցվում են ջրանցքներ ու վոտոգման սխեմաներ, տարածվում և տեխնիկան գյուղատնտեսութեան մեջ, աճում և ամրանում և կուլտեստային շարժումը:

Ինդուստրացման տեմպերն առաջներում հետամնաց ազգային հանրապետութիւններում ու մարզերում անհամեմատ ավելի բարձր են, քան ամբողջ ՌՍՖՍՀ մեջ:

Աճում են տեքստիլ, մետաքսակարժ, բամբակաման գործարանները Միջին Ասիայում ու Կովկասում. Կրիմում կառուցված և կերչի վեթխարի մետաղաձուլ գործարանը, Ուկրայնայում՝ Դնեպրոստորը, Կարելիայում լաճն ծավալվել են թղթի ու քիմիական ձեռնարկութիւնները, Բելոռուսիայում աճել են Մոզելիովի արհեստական մանածոյի գործարանը, Ոսինստորյը և այլն. Անդրկովկասում՝ Չազեսը, Ռիոնգեսը, Կաղկստանում՝ գունավոր մետաղների Ռիդգերովյան կոմբինատը, «Կարազանդիյան ածուխները», «Ալտոբուրիյան Փոսֆորիտները» և այլն, և այլն:

Նոր արդունարեական շինարարութեան արժեքը, վորն այժմ ծավալվում և ազգային հանրապետութիւններում ու մարզերում, հասնում և 1 միլիարդ 100 միլիոն ռուբլու:

Դրա հետևանքով արդունարեութեան համայնառն արտադրանքն, որինակ՝ Կաղկստանում աճել և 1920 թվի 10 միլիոնից մինչև 1930 թվի 78 միլիոն ռուբլու, Կարելիայի ՍՍՀ մեջ՝ 20 միլիոնից մինչև 124 միլիոն ռուբլու, Դաղստանում՝ 13 միլիոնից մինչև 43 միլիոն ռուբլու և այլն:

Յերկրի ինդուստրացման և մեր կուսակցութեան գլխավոր գծի անշեղ կիրառման հիման վրա հաջողութեամբ ընթանում և նաև ազգային հանրապետութիւնների գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակերտումը:

Բուռն կերպով աճում են ցանքադաշտերը: Այնտեղ ցանքադաշտերը 1930 թվին 1926 թվի համեմատութեամբ կազմել են Թաթարստանի ՍՍՀ մեջ 116 տոկոս, Վոստական մարզում՝ 123 տոկոս:

Բուրյաթ-Մոնղոլական հանրապետութեան մեջ՝ 128 տոկոս, Կիրգիզիայում՝ 160 տոկոս:

Ել ավելի հսկայական նվաճումներ են ձեռք բերված կուլտեստական շինարարութեան մեջ:

Առ 1-ն հոկտեմբերի 1931 թվի արդեն իսկ կուլեկտիվացված էր ԲՍՍՀ մեջ գյուղացիական տնտեսութիւնների 48,5 տոկոսը, ՌԽՍՀ՝ 67,1 տոկոս, ԱՍՖՍՀ՝ 39,0 տոկոս, Ուզբեքստանի ՍՍՀ՝ 66,7 տոկոս, Թուրքմենստանի ՍՍՀ՝ 56,7 տոկոս, Տաջիկստանի ՍՍՀ՝ 28,5 տոկոս:

Առանձին ազգային հանրապետութիւններում ու մարզերում կուլեկտիվացման տոկոսն էլ ավելի բարձր է: Այսպես որինակ՝ Մերձվոլգայան գերմանացիների ԱՍՍՀ կուլեկտիվացված է տնտեսութիւնների 90,9 տոկոսը, Կրիմում՝ 83,3 տոկոսը և այլն:

Կուլեկտիվացման հաջողութիւնների հետ, նրա հիման վրա կուլեկտիվացման, վորպես դասակարգի վերացման հետ ազգային ռազմները վոչնչացնում են կապիտալիզմի և ազգային անհավասարութեան վերջին հենարանը՝ կուլակին:

Տնտեսութեան զարգացման հետ միաժամանակ արագ տեմպերով աճում և նաև կուլտուրական շինարարութիւնը:

Կուլտուրական հեղափոխութեան խնդրի կենսագործումը մեծ դժվարութիւն է ներկայացնում, քանի վոր Սորհրդային Միութիւնը ցարական Ռուսաստանից ժառանգութիւն ստացավ տասնյակ անգրագետ ազգութիւններ, վորոնք չունեին իրենց դերը, դպրոցները, թերթերն ու գրքերը:

Սակայն չնայած դժվարութիւններին, կուլտուրան ազգային հանրապետութիւններում ու մարզերում խստիվ բարձրացել է:

Շատ հանրապետութիւններ ու մարզեր դարձել են համատարած գրադիտութեան ռազմներ: ԲՍՍՀ բոլոր միութենական հանրապետութիւններից առաջ մտցրեց ընդհանուր պարտադիր ուսուցում: Ուկրայնայում դպրոցներով ընդգրկված է բոլոր յերեսխանների 98,5 տոկոսը: Հյուսիսային Ոսեթայի ավտոնոմ մարզում հեղափոխութիւնից առաջ կար 10 տոկոս գրագետ, իսկ 1931 թվի սկզբներում կար արդեն 65 տոկոս գրագետ: 1931 թվին ՍՍՀՄ մեջ Ադրիդեյան էր վոր ամենից առաջ 100 տոկոսով դարձավ համատարած գրադիտութեան յերկիր. մինչդեռ հեղափոխութիւնից առաջ այդտեղ գրագետների թիվը յեղել է միայն 7 տոկոս, իսկ գրագետ կանանց թիվը՝ 0,5 տոկոս: Սորհրդային իշխանութիւնը

նը ԽՍՀՄ մի շարք ազգութիւններէ մեջ հին արարական այբու-  
բենը, վոր չափազանց դժվար մատչելի յեր լայն մասսաներէ  
համար, փոխեց լատիական այբուբենով: Այդ ոգնեց բնակչության  
ամենալայն մասսաներին հազորդակից լինելու գրագիտությանն ու  
կուշտութիւն:

1907 թվին ցարական պետական դուման վորոչեց. «Ասպայ-  
ման ու անչեղորեն այլազգիներին սովորեցնել ուսաց լեզու,  
վորպեսզի նոր սերնդի համար այդ լեզուն դառնա մայրենի և մեր  
ուսական կուշտութեան դառնա իրենց կուշտութեան»:

Խորհրդային իշխանութիւնը վճռականապես պայքարում է  
վորեւ ազգության խորթ լեզու փաթաթելու դեմ: Մենք  
կողմնակից ենք բոլոր ազգութիւններէ բանվորներէ և աշխատա-  
վորներէ լիակատար միասնութեանը և, հատկապես հենց այդ  
պատճառով, գնում ենք վորեւ ազգության աշխատավորներէ  
մտտ մեր կոմունիստական ազիտացիայով ու պրոպագանդով  
և ոգնում ենք նրանց կառուցելու պրոլետարական կուշտութեան  
իրենց մայրենի լեզով: Մենք մարտնչում ենք ԽՍՀՄ բոլոր փոյր-  
վորդներէ ազգային կուշտութեաներէ ամեն կերպ զարգացման հա-  
մար, յուրաքանչյուր լեզվի և յուրաքանչյուր ազգային կուշտու-  
բայի մեծագոյն նրբազգացութեան համար: Բայց միևնույն ժա-  
մանակ բայլչելիները կոչ են անում այնպիսի կուշտութեան շինա-  
բարութեան, վորն ըստ բովանդակութեան կոմունիստական, ին-  
տերնացիոնալ, պրոլետարական կուշտութեան յէ:

Ըստ ձեռի ազգային և ըստ բովանդակութեան սոցիալիստական  
կուշտութեան համար են մարտնչում մեր կուսակցութիւնն ու  
խորհրդային իշխանութիւնը:

Առաջներում հարստահարված ազգութիւններէ չափազանց  
արագ անտեսական ու կուշտութեան անուժը, վոր մենք ունենք,  
ներկայումս տակալին բավական չէ և չի կարող մեզ բավարարել:

Այդ պատճառով 16-րդ կուսհամագումարը գերեկտիվ է տվել  
հետագայում միջոցներ ձեռք առնել վերացնելու ազգութիւններէ  
փաստացի անհավասարութիւնը և զարգացնելու նրանց ազգային  
կուշտութեանը: Յեւ այդ տարբերութիւններէ վերացման ճանա-  
պարհին առաջադիմութեան մեծագոյն քայլ են հանդիսանում  
յերկրորդ հնգամյակի նախատեսումները, վոր հաստատել է Համ-  
կոմկուսի (բ) 17-րդ կոնֆերանսը:

Որինակ՝ Միջին-ասիական հանրապետութիւնները յերկրորդ  
հնգամյակում կդառնան ԽՍՀՄ բամբակի հիմնական կենտրոնը և

միևնույն ժամանակ արդյունաբերական կենտրոն՝ սեփական ար-  
տադրութեամբ, վորը պետք է ապահովի Միջին Ասիայի բնակ-  
չութիւնը հիմնական սպառողական ապրանքներով: Թե ի՛նչ չա-  
փով մեծ կլինի դուրստեսութեան անուժը, յերեւում է այսպի-  
սի փաստից: Ուղեկատանում նախատեսվում է յերկրորդ հնգա-  
մյակի վերջում հավաքել 100 միլիոն փութ բամբակ, կրկնապատ-  
կելով յուրաքանչյուր հեկտարի բերքատուութիւնը: Այդ նշանա-  
կում է, վոր մենք յերկրորդ հնգամյակում վոչ միայն լիովին կբա-  
վարարենք մեր արդյունաբերութեան բամբակի պահանջները,  
այլև հնարավորութիւն կունենանք բամբակ արտահանելու:

Կազակստանի ԽՍՀ հետամնաց ծայրագավառից կդառնա  
ԽՍՀՄ արդյունաբերական ու դուրաղանտեսական խոշորագոյն  
կենտրոն: Կարագանդայում քարածխի արդյունաբերութիւնը կը-  
հասնի 25 միլիոն տոննի, Էլեկտրոներգիան՝ 3·270 հազար կիլո-  
վատի, լայն չափով կծավալվի յերկաթուղային նոր շինարարու-  
թիւնը և այլն:

Նույնպիսի պատկեր կներկայացնեն նաև ազգային այլ հան-  
րապետութիւնները:

Այդ բոլոր հաջողութիւնները պարզ ցույց են տալիս ամբողջ  
աշխարհի պրոլետարիատին և աշխատավորութեանը յեւլքն ստրկա-  
կան դրութիւնից, միակ ու ճիշտ յեւլքը, վորը պրոլետարական  
հեղափոխութեան մեջ է, պրոլետարիատի դիկտատուրա հաստա-  
տելու մեջ է:

Լենինյան ազգային քաղաքականութեան հաջողութիւնները  
բայլչելիներէ կուսակցութիւնը ձեռք է բերել անհաշտ պայքար  
մղելով ազգային հարցում յեղած թեքումներէ դեմ:

Ազգային հարցում, ինչպես և մեր քաղաքականութեան այլ  
բնագավառներում, մեր կուսակցութիւնն ստիպված էր յետ մղե-  
լու գրոհներ դասակարգային թշնամու կողմից, վորը փորձում էր  
աղքել կուսակցութեան ու բանվոր դասակարգի վրա, չեղել կու-  
սակցութեան քաղաքականութիւնը լենինյան ուղիից: Դասակար-  
գային թշնամին ուղում է չարաչահել մասսաներէ հետամնացու-  
թիւնը, սերմանել ազգային պառակտում մեր Միութեան տար-  
բեր ազգութիւններէ աշխատավորներէ մեջ, այդպիսով իսկ թու-  
լացնելով մեր շարքերի միասնութիւնը:

Ամեն տեսակ չովինիզմն ու նացիոնալիզմը մեր դասակար-  
գային թշնամու գնեքն է, վորն ուղղված է աշխատավորներէ չա-  
հերի դեմ: Սոցիալիստական ծավալուն հարձակմանը կատաղիորեն

գլխավորող կապիտալիստական տարրերի գործակալների միջոցով չովլինիզմը ներս է սողոսկում յերբեմն աշխատավորների հետամնաց խավերի մեջ և մինչև իսկ՝ կուսակցութեան շարքերը:

Կուսակցութեան անընդհատ անխնայ պայքար է մղում մեծապետական չովլինիզմի, վորպես տվյալ ետապում գլխավոր վտանգի դեմ, և միաժամանակ տեղական նացիոնալիզմի թեքման դեմ:

Մեծապետական չովլինիզմն արտահայտվում է արհամարհական վերաբերմունքով դեպի այլ ժողովուրդները, դեպի նրանց լեռուն ու կուլտուրան, հաստատումով, թե դերադանց է ուսական լեզուն, կուլտուրան և ժողովուրդը մյուսների նկատմամբ. արտահայտվում է նրանով, վոր չեն ցանկանում հաշվի առնել տեղական բնակչութեան առանձնահատկութեանները, կարիքներն ու շահերը:

Մեծապետական չովլինիստները հանդես են գալիս ազգութեանների ինքնորոշման իրավունքների լողունդի դեմ, հանդես են գալիս հոգուտ ազգային հանրապետութեանների ու մարդերի վորչնչացման, հոգուտ առաջներում հարստահարված, հետամնաց ազգութեաններին ցույց տրվող անտեսական ու կուլտուրական ոգնութեան զաղարեցման և այդ ժողովուրդների ազգային կուլտուրաների զարգացման դեմ: Մեծապետական թեքումնավորները շատ հաճախ ջողարկվում են ձախ Փրադներով: Նրանք ձգնում են մեկնարանել Լենինի խոսքերը՝ կոմունիզմի որոջ ազգութեանների ձուլման մասին այն իմաստով, թե իբր արդեն իսկ հասել է ժամանակը վերացնելու ազգային հանրապետութեաններն ու մարդերը և ի մի ձուլելու բոլոր ազգութեաններն ու ազգային կուլտուրաները:

Մինչդեռ Լենինն ասել է, վոր «ազգային ու պետական տարբերութեանները ժողովուրդների ու յերկրների միջև... կպահպանվեն դեռ շատ յերկար ու յերկար ժամանակ, մինչև իսկ պրոլետարիատի դիկտատուրան համաշխարհային մասշտաբով իրազործելուց հետո»: Հետևապես, մենք պետք է ամեն կերպ ոգնենք յուրաքանչյուր ազգութեան աշխատավորներին՝ հաղորդակից դարձնելու նրանց սոցիալարաբութեան գործին, նրանց համար ամենից մատչելի միջոցով, այսինքն՝ նրանց լեզվով, զարգացնելով նրանց ազգային կուլտուրան, փոխելով խորհրդային ապարատի աշխատանքը, դասավանդումը դպրոցներում և այլն ազգային լեզվով:

Դեպի մեծապետական չովլինիզմը թեքման վտանգը գլխավոր վտանգ է հանդիսանում, վորովհետև «նա արտահայտում է առաջ-

ներում իշխող վելիկոուսական ազգութեան մահացող դասակարգերի ձգտումը՝ վերադարձնելու կորցրած արտոնութեանները» (Ստալին) և ազգութեանների միասնութեան ու միաձուլման դիմակի տակ աշխատում են անջատում սերմանել մեր Միութեան ցանադան ազգութեանների աշխատավորների մեջ և այդպիսով իսկ թուլացնել նրա կորովը:

Մեծապետական չովլինիստների համար պայքարում է և՛ կուլտուրալը, և՛ տերտերը, վորոնք կուսակցութեան ազգային քաղաքականութեան մեջ տեսնում են իրենց ամենավտանգավոր սպառնալիքը:

Կուսակցութեանը համառ պայքար է մղում նաև անտիսեմիտիզմի (հրեասոցյութեան) դեմ: Անտիսեմիտիզմը մեծապետական չովլինիզմի արտահայտութեաններից մեկն է, վորը Լենինը քանիցս խարսդանել է վորպես «ամենավայրենի, ամենադադրելի, գաղանձաբար գործ»:

Դեպի նացիոնալիզմը թեքման եյութեանն արտահայտվում է նրանով, վոր նա ջանում է մեկուսացնել իր ազգութեան աշխատավորներին իՍՂՄ մնացած ժողովուրդներից, կտրել իր ազգութեան աշխատավորներին բանվոր դասակարգի ու կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեանից և սքողել դասակարգային պայքարն իր ազգութեան ներսում: Այդ թեքումն առաջ է քաշում առաջին հերթին ազգային շահերն ի վնաս աշխատավորների ընդհանուր խնդիրների: Նա ձեռնտու յե դասակարգային թշնամուն, վորովհետև իրախտում է իՍՂՄ աշխատավորների ինտերնացիոնալ միութեանը և այդպիսով իսկ թուլացնում է պրոլետարիատի դիկտատուրան: Այդ թեքումն արտահայտում է առաջներում հարստահարված ազգութեանների շահագործող դասակարգերի շահերն ու ձգտումները:

Ազգային հարցում թեքումների դեմ մղած իր պայքարում կուսակցութեանը կոխում է իր շարքերը լենինյան, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վողով, ապահովում է ե՛լ ավելի մեծ հաջողութեանները իՍՂՄ բոլոր ազգութեանների զարգացման մեջ, խորհուրդների յերկրի բոլոր աշխատավորների յեղբայրական համախմբման մեջ:

Այն յերկրների նկատմամբ, վորոնք չեն անցել զարգացման կապիտալիստական շրջանը (Թուրքմենստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Կադակստան, Դաղստան և այլն), խորհրդային իշխանութեան լենինյան ազգային քաղաքականութեանն ապահովում է

երանց անցումը սոցիալիստական ուղիների վրա, խուսափելով կապիտալիստական զարգացումից:

Մենք կենսագործում ենք այդ յերկրներում Լենինի այն ցուցումը, թե՛ «ամենից առաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությունը հետամնաց յերկրները կարող են անցնել խորհրդային հասարակարգին և զարգացման վորոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, խուսափելով զարգացման կապիտալիստական շրջանը:

Մեր կողմից այդ խնդրի հաջող կենսագործումը ԽՍՀՄ մեջ լավագույն միջոց է կոմունիզմի համար ազխտացիայի ու պրոպագանդի, աշխարհի հարստահարվող ժողովուրդների աշխատավոր մասսաներին մորիլիկացիայի յենթարկելու՝ պայքարելու իմպերիալիզմի հետամնաց գաղութներում հեղափոխության միջոցով զարգացման վոչ կապիտալիստական ուղիի համար:

ԽՍՀՄ մեջ մեր ազգային քաղաքականությունը համախմբում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության դրոշի ներքո միլիոնավոր հարստահարվող սարուկներին, վորոնք առաջավոր սոցիալիստական յերկրների ոգնությունը ու ղեկավարությունը կհասնեն խորհրդային իշխանությունն ու կոմունիզմին, խուսափելով կապիտալիստական ստրկություն շրջանը:

**ՆՅՈՒԹԵՐ ԻՆՖՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ**

**1. ՇԵՏԱՄԱՆԱՑ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՀԱՍՆԵՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ**

ԳՐԻ ԱՌ ԸՆԿ. Ստալինի գեկուցումից ստորև բերված ցիտատը: Միաբնակից հանրապետությունների բյուջեների անման դիագրամը և յեզրակացությունն հանիր այն մասին, թե

**ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ Ե ՁԵՌՔ ԱՌՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՈՉՆՁԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐԻ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

ԽՍՀՄ բոլոր ազգություններն աշխատավորները, կոմունիստական կուսակցության ու խորհուրդների ղեկավարությունը սոցիալիզմի շինարարության մեջ ձեռք են բերել վիթխարի հաջողություններ:

ԽՍՀՄ մեջ—սոցիալիզմի բունակում, վորը համախմբել է

էր շուրջը բնակչության մեծամասնությունը, հիմնովին վոչընչացված և ազգային հարստահարումը, ստեղծված են պայմանները փոխադարձ վստահության համար, հիմք է դրված ժողովուրդների յեղբայրական աշխատակցության՝ սոցիալիզմի շինարարության համար: Այս բոլորը պայմանավորել են ժողովրդական տնտեսության շտեյնված աճում, նախկին միահեծան Ռուսստանի գաղութային ու կիսագաղութային հետամնաց ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական վիթխարի վերելք: Ամենից պարզ այդ կարելի յե դիտել միլիոնական հանրապետությունների բյուջեների աճման տեմպերով:

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ բյուջեի ընդհանուր աճումը 1931 թվին յեղել է 45,8 %:

ՌԽՖՍՀ բուջեն աճել է	31,2	տոկոսով.
ՌԻՍՍՀ	»	»
ԲԽՍՀ	»	»
Ա.ԽՖՍՀ	»	»
Թուրք խՍՀ	»	»
Ռիգր խՍՀ	»	»
Տաջ խՍՀ	»	»

ՌԽՖՍՀ ալատնոմ հանրապետությունների բյուջեները 1932 թվին կերկնստղատկվեն, համեմատած հնգամյակի ստալին տարվա հետ:

Ազգային հարցի եյությունն է՝ «վոչնչացնել ազգությունների այն հետամնացությունը (տնտեսական, քաղաքական, կուլտուրական), վորը մենք ժառանգել ենք անցյալից, վորպեսզի հնարավորություն տանք հետամնաց ժողովուրդներին հասնելու կենտրոնական Ռուսաստանին և՛ պետական, և՛ կուլտուրական, և՛ տնտեսական տեսակետից»

(Ի. ՍՍԱԼԻՆ)

**2 ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՄԱՐՁՆԵՐԻ**

ԳՐԻ ԱՌ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՎԵՐԸ ՅԵՎ ՊԱՏՄԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՐՁՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ազգային հանրապետությունների ու մարզերի տնտեսական հետամնացությունը հետևանք է այն բանի, վոր ցարկովը այդ

ուայոնների վրա նայում եր վորպես գաղութների վրա, վորոնք պետք է հումուլթ մատակարարեն, արհեստականորեն կասեցնում եր նրանց արտադրական ուժերի զարգացումը, արդեւակ եր հանդիսանում նրանց արդյունաբերութեան զարգացմանը և այլն: Միջին Ասիայում, բամբակի արտադրութեան կենտրոնում, ամենեւին տեքստիլ գործարաններ չկային: Նույնը վերաբերում եր նաև Անդրկովկասին: Հողի ընդերքը մշակվում եր սահմանափակ քանակով ու հավաքակիչ ձևով (Բագվի նավթը): Կրկնակի ճնշումը, — գաղութային ու սեփական շահագործողների, — հնարավորութիւն չէր տալիս զարգացնելու գյուղատնտեսութեանը ծայրագոյտներում:

Միանգամայն հակառակ քաղաքականութիւն է վարում պրոլետարական դիկտատուրան: «Նրա (պրոլետարական դիկտատուրայի) ամենասառաջին խնդիրը հանդիսանում է արդյունաբերութեան պլանաչափ զարգացումը ծայրամասերում», — ասում է կուսակցութեան 10-րդ համագումարը: Այն ժամանակ, յերբ վերահանդման շրջանի տարիներում այդ խնդիրն իրագործվում եր համեմատաբար փոքր չափերով, այդ վերակառուցման շրջանում նա լայնորեն ծավալվեց, մասնավորապէս Արևելքում քարածխամեատաղանդական յերկրորդ բազա ստեղծելու մասին կուսակցութեան դիրեկտիվի հետեանանքով:

Ազգային հանրապետութիւնների արդյունաբերութեան մեջ ներդրվում են միլիարդ ռուբլիներ, քանի վոր այդ ուայոններում արդյունաբերական հին ձեռնարկութիւններ չկային (բացառութեամբ Ուկրայնայի ու մասամբ Ադրբեյջանի) և համարյա այդ բոլոր միջոցները գործադրվում էին կապիտալ նոր շինարարութեան համար:

Ահա առանձին հանրապետութիւնների ինդուստրացման մասին տվյալները:

ՈւզբէսՏ արդյունաբերութեան մեջ համախառն արտադրանքը 1929-1930 թվին գերազանցել է նախապատերազմական արտադրանքը 2 և կես անգամ:

Անդրկովկասի արդյունաբերութեան համախառն արտադրանքը 1931 թվին գերազանցել է հնգամյա պլանի նախատեսումները 8 տոկոսով և աճել է համարյա 70 տոկոսով համեմատած 1930 թվի հետ:

Տաջիկստանի արդյունաբերութեան համախառն արտադրանքը

ըր 1930 թվին կազմել է 10·800 հազար ռուբլի, իսկ 1931 թվին՝ 32 միլիոն ռուբլի:

Տաջիկստանի արդյունաբերութեան մեջ կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը 1928 թվից մինչև 1930 թվին ավելացել է 40 անգամ:

Արևելքի հետամնաց յերկրներում արդյունաբերութեան մի շարք ճյուղեր ստեղծվել են առաջին անգամ, իսկ Տաջիկստանում ամբողջ արդյունաբերութիւնն ստեղծված է խորհրդային իշխանութեան որոք:

## 5-ԱՄՅԱԿԸ ԿԱՏԱՐՎԱԾ Ե ԺԱՄԱՆԱԿԻՑ ՇՈՒՏ

### 2 1/2 ՅԵՎ 3 ՏԱՐՈՒՄ

ԿԱՐԵՆԻԱ

անտառային ու փայտամշակ արդյունաբերութիւն

ՉԵՉՆՅԱ

նավթ

ԱՆԲԲԵՋԱՆ

նավթ

ԹԱԹԱՐՍՏԱՆ

անտառային արդյունաբերութիւն, հինական քիմիա, վառելան: արդյունաբերութիւն

ԲԱՇԿԻՐԻԱ

մետաղ, անտառային ու փայտամշակման, շինանութեր

ՄԱՐԻՆՅԱՆ

փայտամշակ. արդյունաբերութիւն

ԴԱՂՍՏԱՆ

ապակեգործ արդյունաբեր.

ՉՈՎԱՇԻԱ

շինանյութեր

ՅԱԿՈՒՏԻԱ

կաշի, անտառ. արդյունաբերութիւն

Ազգային հանրապետութիւններում ստեղծվում են վոչ թե մարդաճանային ձեռնարկութիւններ, այլ խոշոր գործարաններ

Կապիտալ ներդրումները աճման տեմպերն ազգային մարդերում 1932 թվին (համեմատած 1931 թ. հետ)	
Յակուտիա	171,3 %
Թաթարստան	168,7 %
Դաղստան	156,5 %
Կարելիա	151,6 %
Կազակստան	143,8 %
Բաշկիրիա	140,1 %
Կարա-Կալպակիա	57,9 %

ու ֆաբրիկներ, արդյունաբերութեան գիշատներ, վորոնք կառուց-  
ված են տեխնիկայի վերջին խոսքով:

Այդպիսին են՝ կերչի մետաղաձուլական գործարանը Կրիմում,  
Փոմեյի գյուղատնտեսական մեքենաշինարարութեան գործարանը  
Բեյառուսիայում, Չերնիկովյան կոմբինատը՝ Բաշկիրիայում:

Մավալում է վիթխարի շինարարութիւն՝ Կազակստանում  
ու Բաշկիրիայում, վորպէս այնպիսի ռայոններ, վորոնք մտնում  
են Ուրալ-կուլնեցկի կոմբինատի մեջ:

Միջին Ասիայում 1931 թվին կառուցված է Սելմաչ (գյուղա-  
անտեսական մեքենաշինարարութեան) գիզանտը՝ 35 միլիոն  
ռուբլի արժողութեամբ: 1932 թվին արդեն նա տալիս էր 30 միլիոն  
ռուբլու արտադրանք, իսկ 1933 թվին կտա 50 միլիոն ռուբլու  
արտադրանք:

Այնտեղ ավարտված է նույնպէս Կուլա-Սայեյում վիթխարի  
ցեմենտի գործարանը, վորի առաջին հերթը տալու յետարեկան  
100 հազար տակառ ցեմենտ, իսկ ամբողջ ունակութեամբ լինելու  
յետարեկան 1,5 միլիոն տակառ ցեմենտ:

Տաշկենտում ավարտվում է կարի գործարանը, իսկ Չիմքեն-  
դում՝ կապարի (արձձի) գործարանը՝ տարեկան 100 հազար տոնն  
արտադրանքով:

Կարագանդան Կազակստանում վերածվում է Միութեան յեր-  
րորդ քարածխային կենտրոնի:

Արդյունաբերական այդ վիթխարի շինարարութիւնը միան-  
գամայն փոխում է ազգային հետամնաց ռայոնների սոցիալ-տե-  
տեսական դեմքը:

Գոյանում են և աճում ազգային պրոլետարիատի կազմերը:  
Կազակստանում ստեղծված է պրոլետարիատի կես միլիոնանոց  
բանակ, նույնպիսի բանակներ աճում են Կրիմում, Մերձվոլգյան  
գերմանացիների ԱՌՍՀ, Թաթարստանում, Բաշկիրիայում և այլ  
ազգային հանրապետութիւններում:

Ազգային պրոլետարիատի կազմեր են ստեղծվում վոչ միայն  
ազգային հանրապետութիւնների ձեռնարկութիւններում, այլև  
նորաչեն այլ գիզանտներում:

Մագնիտոստրոյում բանվորների մեջ կան 35-ից ավելի ազ-  
գութիւն, վորոնք կազմում են բանվորների ընդհանուր քանակի  
մի յերրորդից ավելին: Նրանց մեջ 3 հազար հոգուց ավելին ուկ-  
րաշնացիներ են, 3,5 հազար՝ թաթար և 2,5 հազար՝ բաշկիր: Յեւ

այդ բանվորները ցույց են տալիս իսկական հերոսութեան, դեպի  
աշխատանքը սոցիալիստական իսկական վերաբերմունքի որինակ-  
ներ: Այսպէս, որինակ՝ Սագատայեվի բետոնագործների բրիգա-  
դը տվեց խոնելու համաշխարհային ռեկորդ, Մալիտովի բրի-  
գադը լավագոյն աշխատանքի համար ստացավ մարտնչոզ անասու-  
վածների մարզային միութեան կարմիր դրոշը:

1933 թվին ՌԽՖՍՀ ֆաբրիկներում ընդունված էյին  
7 հազար նացիոնալ, իսկ 931 թվին աշնան ընդունելութիւնն է՝  
40,300 նացիոնալ:

### 3. ԳՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ԳՐԻ ԱՌ ստորև բերված նյութերի հիմնական թվերը

Վիթխարի ՅԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵ-  
ՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ

### ԶՆՁՎՈՒՄ ԵՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՅՄԱՆԱԳԾԵՐԸ

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՎԱԾ Ե

ՈՒՍՆՆՆԵՐ	— 67 <sup>0</sup> / <sub>0</sub>
Ուղղակի ստանում	— 66 <sup>0</sup> / <sub>0</sub>
Թուրքմենստանում	— 56 <sup>0</sup> / <sub>0</sub>
Անդրկովկասում	— 36,6 <sup>0</sup> / <sub>0</sub>
Բելոռուսիայում	— 48 <sup>0</sup> / <sub>0</sub>
Տաջիկստանում	— 28,5 <sup>0</sup> / <sub>0</sub>
Թաթարստանում	— 63 <sup>0</sup> / <sub>0</sub>

Ագիգեյան, կարբոլան, հուսիսային Ոսեթիան, Կրիմը համա-  
տարած կոլեկտիվացման յերկրներ են

1400 մեքենատրակտորային կայաններից և մեքենա-  
խոտհարային 180 կայաններից, վոր գոյութիւն ունեն ամբողջ  
ԽՍՀՄ մեջ—

— ազգային հանրապետութիւններում ու մարզերում ստեղծ-  
ված են 675 ՄՏԿ և 15 ՄԽԿ: Ազգային ռայոններում լայն ծավալ-  
վել է խորհունտեսութիւնների շինարարութիւնը: Հատուկ նշա-

Նախկին ժամանակներու և նախկին կենդանարուծական խորհրդարաններու շինարարութիւնը: Բազմազան և մատնանշել այն, վոր հազարաւորներու մէջ ունենք վիթխարի մասխորհրդարանութիւններ, վորոնք բռնուած են 560 հազար հեկտար տարածութիւն, 394 հազար հեկտար տարածութիւն և այլն: Խորհրդարանութիւններու ազդային ուսումնարանները բնակչութեան հարկարարութեան մէջ բնակչութեան, մինչև իսկ ջոջվոր բնակչութեան հսկայական մասսաներ, ինչպէս, որինակ՝ հազարաւորներու և նպաստուած են կողեկտիվացման աճմանը: Ազդային ուսումնարանները հիմնականում արդէն աւարտել են համաարած կողեկտիվացումը: Հյուսիսային հովիտներու արտադրութեան մարդերից վորոնք համարյա հասել են համարած կողեկտիվացման: Ազդարեւում մինչև հոկտեմբերի 14-րդ տարեդարձը կողեկտիվացված և յեղել բոլոր միջակ-չքաւոր տընտեսութիւնները 44 տոկոսը, իսկ բամբակացան ուսումնարան կողեկտիվացման տոկոսը բարձրացել է մինչև 60-ի: Հարյուրավոր ՄՏԿ, հազարավոր տրակտորներ գտնվում են ազդային ուսումնարանում:

#### 4. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ԳՐԻ ԱՌ ստորև բերված նյութերի հիմնական քվերք և պատմիր

Ինչ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Պրոլետարիատի գիտատուրայի ու սոցիալիզմի շինարարութեան շրջանը ԽՍՀՄ մէջ ազդային կուլտուրաների բարգաւաճման շրջան է, վորոնք սոցիալիստական են ըստ բովանդակութեան և ազդային են ըստ ձևի... Միայն ազդային կուլտուրաների բարգաւաճման պայմանով կարելի յե իրոք հաղորդակից դարձնել հետամնաց ազգութիւններին սոցիալիստական շինարարութեան գործին» (Ստալին):

Վիթխարի յեն կուլտուրական հեղափոխութեան հաջողութիւնները: Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդները միասնական ճակատով մարտնչում են ընդհանուր նախնական կրթութեան համար, ընդհանուր գրագիտութեան համար: Բանվորները

ու պարագային չարքայ հազարավոր յերեխաներ սովորում են իրենց մայրենի լեզվով դպրոցներում, տեխնիկումներում, հասակ դասընթացներում, բարձրագույն կրթական հիմնարկներում և այլն):

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՆԵՐՆԵՐՆԵՐԻ ՄՏԵՎՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ, ՎՈՐՆ ԱԶԳԱՅԻՆ Ե ԸՍՏ ԶԵՎԻՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ Ե ԸՍՏ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅԱՆ

Հենց միայն 1931 թվին բոլոր ազգային հանրապետութիւններում ուսուցումով ընդգրկված էր նույնքան անդրազեա, վորչափ սովորեցված է մինչ այդ 10 տարվա ընթացքում:

Ազգային հանրապետութիւնների ազգային դպրոցներում մայրենի լեզվով սովորում են ուղղակից 93,3 տոկոսը, վրացիների 98,1 տոկոսը, ուղրեկները 96,9 տոկոսը, թուրքերի 96,5 տոկոսը, թաթարները 96,7 տոկոսը:

Ազիգեյան, Կարաբլինո-Բալիարիան, Կարմիկիան, Հյուսիսային Ոսեթիան դարձել են համաարած գրագիտութեան ուսումներ:

Զեռք են բերված վիթխարի հաջողութիւններ ԽՍՀՄ հետամնաց ազգութիւնների կուլտուրական շինարարութեան մէջ:

Հեղափոխութեանից առաջ համարյա գլխովին անգրագետներ, նրանք այժմ արագ տեմպով վերացնում են իրենց հետամնացութիւնը:

Անգրագիտութեան վերացում ու համաարած ուսուցում, բնիկ աշխատավորութիւնից կադրերի պատրաստութիւն, գրականութեան և արվեստի զարգացում, մամուլի աճում և այլն, — այս բոլոր գծերով կուլտուրական հեղափոխութիւնը լայն ծաւալվել է նաև Խորհրդային Միութեան ազգային ուսումներում: Կատարի պայքար մղելով ընդդէմ մահացող դասակարգերի մտայնորդների ու նրանց սպորտունիստական ազնետուրայի կատուցվում են նոր կուլտուրաներ, վորոնք ազգային են ըստ ձևի և սոցիալիստական են ըստ բովանդակութեան:

## 5. ՓՈՒԼՈՒՄ Ե ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ- ԲՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՐԶԵՐԻ ԴԵՄՔԸ

Ստորև բերված նյութերով ՊԱՏՄԻՐ ազգային սայուն-  
նեթի անտեսական ու կուլտուրական ամսան մասին

Լենինյան ազգային քաղաքականության ու Խորհրդային է-  
յանության յուր միջոցառումների հետևանքով միանգամայն  
փոխվում է հետամնաց ազգային ուսյունների դեմքը: Ահա մի  
լանի որինակ:

Կիրգիզիայում հեղափոխության սկզբին դպրոցներով ընդ-  
գրելված էր դպրոցական հասակի մանուկների միայն 40 տոկոսը,  
իսկ այժմ ընդգրկված է 80 տոկոսը:

Կրագիտությունը բնակչության մեջ այդ ժամանակամիջո-  
ցում աճել է 2 տոկոսից, հասնելով 46 տոկոսի:

Բնորո մշակույթների ցանքադաշտն աճել է ավելի քան յերկու  
անգամ (450 հազար հեկտարից հասնելով 1 միլիոն հեկտարի):

Արդյունաբերության արտադրանքն ավելացել է 70 անգամ:  
Բաշկիրիայում հնդամյակի յերեք տարվա ընթացքում ար-  
դյունաբերության արտադրանքն աճել է 285 տոկոսով:

Ցանքադաշտը 1922 թվի 1 միլիոն հեկտարից հասել է 1931  
թվին 3,5 միլիոն հեկտարի:

Կուլեկտիվացման տոկոսն է՝ 78:

Տաքիկստանը Խորհրդային միութենական հանրապետություն  
է, վորը տեղափոխված է Հնդկաստանին մոտիկ:

Այն ժամանակ, յերբ Հնդկաստանում ամեն տարի սովից ու  
աղքատությանից մեռնում են միլիոնավոր աշխատավորներ, Տա-  
քիկստանում հեղափոխության տարիներին ընթացքում մահացու-  
թյունը նվազել է յերկու անգամ:

Հեղափոխությունից առաջ Տաքիկստանում համարյա արդյու-  
նաբերություն չկար, 1932 թվին արդյունաբերությունը ավել է  
32 միլիոն ուրյու արտադրանք:

Թուրքմենստանում հեղափոխությունից առաջ համարյա ար-  
դյունաբերություն չկար: Ներկայումս Աշխաբադում կառուցված  
են տեխնիկայի վերջին խոսքի համեմատ խոշոր տեքստիլ գոր-  
ծարան, յերկու մետաքսակարծ գործարան, վորից մեկը (Չար-  
ջույում) իր արտադրական ունակությունը յերբարդ տեղն է գրա-  
վում աշխարհում:

Չարդանում է լեռնա-քիմիական արդյունաբերությունը  
(նավթ, ծծումբ և այլն):

Աճում է դյուղամանսությունը Թուրքմենստանում: 1925  
թվից մինչև 1931 թիվը բամջանքադաշտն աճել է 3 անգամ (62  
հազար հեկտարից հասնելով 180 հազար հեկտարի):

Հեղափոխությունից առաջ բնիկների մեջ դրաղխությունը  
3 տոկոսից պակաս էր, ներկայումս նա արդեն հասել է 35 տո-  
կոսի:

1932 թվին ընդհանուր ուսուցումով ընդգրկված էր հանրա-  
պետության ամբողջ բնակչությունը:

Առաջին անգամ ստեղծված է Թուրքմենական ազգային թատ-  
րան, միայն հեղափոխության որոշ հանդես յեկան թուրքմենա-  
կան լեզվով սրաթերթեր ու ամսագրեր:

Անդրկովկասյան փեդերացիան հետամնաց աղբարային յերկ-  
րից Վրսն է՛լ ավելի դյուղացիական է, քան Ռուսաստանը (Լե-  
նին) վերածվում է կոլեկտիվա- աղբարային յերկրի:

Անդրկովկասի արդյունաբերության համախառն արտադրան-  
քը վերջին տասնամյակում ավելացել է ավելի քան 9 անգամ:

Հանրաձանոթ են Բաղվի պրոլետարիատի հերոսական հաջո-  
ղությունները՝ 5-ամյակը 2 և կես տարում կատարելու մեջ:

Ադնեֆթը դարձել է Խորհրդային նավթային արդյունաբերու-  
թյան հուճկու տրեստը, վորն աշխատում է այժմ առաջավոր յեկ-  
րտական ու ամերիկական տեխնիկայի վերջին խոսքի համեմատ:  
Ադնեֆթը հսկայական նավթաթոր գործարաններ է ծավալել Բա-  
թումի շրջակայքում, նոր նավթամուղ է անցկացրել Բաղվի ու  
Բաթումի միջև:

Բարսիլի արդյունահանումը այդ տարիներին աճել է  
5 անգամ: Տեքստիլ գործարանների ունակությունն աճել է 5 ան-  
գամ:

Ուժեղ զարգացում են ստացել շինանյութերի արդյունաբերու-  
թյունը, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինարարու-  
թյունը:

Դրվում է սե մետաղաձուլության հուճկու հիմքը:

ԱնՅՍՀ արդյունաբերությունը 1932 թվին դերազանցել է  
նախադասերազմյան մակարդակն ավելի քան 3 անգամ:

կատարված է Լենինի զիրենկախի՝ Նավթի, մարգանցի, քարածխի, պղնձի արդյունահանման արագընթաց թափի մասին:

Հաջողությամբ կատարվում է «Առատ յերկրի սպիտակ ածխի, վոսոգման, արտադրական ուժերի զարգացման» վերաբերյալ զիրենկախի:

Զագես, Յերևանգես, Զորայես, Լենինականի, Արաչի, Զուռնարազի հիդրոէլեկտրոկայանները, Բաղվի ելեկտրոցենտրալի կատարած վերակառուցումը, կառուցվող Ռիոնգեսը, Աջարգեսը, Արագանի կայանը, այս բոլորը Անդրկովկասի հիդրոէլեկտրոկայանների տակավին վոչ լրիվ ցուցակն են, վորոնք գործում են արդեն կամ գործի յեն գցվելու մոտ ժամանակներում:

Գյուղատնտեսության արտադրություն ուժերը զարգանում են տնտեսության սոցիալիստական ձևերի հիման վրա:

Սորհանտեսության շինարարությունը, չբավոր-միջակ տնտեսությունների 41 տոկոսի կոլեկտիվացումը, 49 ՄՏԿ, 10 ՄԽԿ (մեքենա-խուսհարային կայան), վոսոգման ու ճահիճների չորացման աշխատանքների հուժեղ թափը հիմնովին ձևափոխվում են Անդրկովկասյան հետամնաց գյուղը:

Բամբակացանի գաշտերի վիթխարի աճումը, տեխնիկական այլ մշակույթների (թեյ, ծխախոտը և այլն) տարածումը զարգան Անդրկովկասի բոլոր հանրապետությունների գործը:

Կուսակցության ղեկավարությունը, հաղթահարելով դասակարգային թշնամիների զիմադրությունը, վերացնելով ազգային պառակտման մնացորդները, Անդրկովկասի ամենահետամնաց ուրյանների աշխատավորները հաղորդակից են լինում գյուղատնտեսության սոցիալիստական ձևերին, յուրացնելով բարձր տեխնիկան:

Սոցիալիստական տնտեսության բարձրացման այդ Փոնի վրա զարգանում է կուլտուրական հեղափոխությունը: Կուլտուրան հուժեղ հոսանքով ներխուժում է այն ազգությունների ու ցեղերի կենցաղի մեջ, վորոնք խորհրդային հեղափոխությունից առաջ չունեին իրենց զիրն ու իրենց այբուբենը: Ավարտման է մոտենում անգրագիտության վերացումը: Ընդհանուր ուսուցումը մոտ է լիակատար կենսագործմանը:

Աճել է Անդրկովկասի կուսակազմակերպությունը, վորը ներկայումս ունի ավելի քան 140 հազար անդամ ու թեկնածու: Կոմյուրիստիկությունն ունի 400 հազար անդամ ու թեկնածու:

Ավտոնոմ հիմունքներով Ուկրաինայի ԽՍՀ կազմի մեջ մտնում է Մոլդավական Սորհրդային սոցիալիստական հանրապետությունը: Ավտոնոմ մոլդավական ԽՍՀ մի քանի տարվա դոյուկթյան ընթացքում աճել է Սորհրդային Մոլդավիայի տնտեսությունն ու կուլտուրան: 1924-1925 թ. թ. զարգացնում սովորել են 6700 մոլդավական յերեխա, իսկ 1931—1932 թ. թ. սովորել են 23,100 յերեխա: 1924 թվին Մոլդավիայի տեխնոսիայի վրա յեղել է 294 դպրոց, 1932 թվին՝ 545 դպրոց: 1925 թվին մոլդավերեն յեղել է մի թերթ, այժմ կա 8 թերթ: Մոլդավիայի ժողովրդական տնտեսության մեջ 1926 թվին ներդրված է 1.087 հազար ուրլի, իսկ 1932 թվին՝ 7332 հազար սուրլի:

## 6. ՅԵԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

Մշակիք ընկ. կուլթիչևի գեկուցումից ստորև բերված քաղվածքները և ՊԱՏՐԱՍՏՎԻՐ ՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԱԿՈՒ հետևյալ բեմայից

ԻՆՉՊԻՍԻՔ ԵՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ՈՒԿՐԱՅՆԱՆՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինան մտնում է Միության խոշոր արդյունաբերական ու հողագործական ուայոնը, շարունակելով զարգանալ նույն ուղղություններով, ինչ նախատեսվում է յին յերկրորդ հնգամյակում: Քարածխի արդյունահանումը կաճի Դոնբասում մինչև 110-120 միլիոն տոննի:

Հարավում չուգունի արտադրությունն աճում է մինչև 11 միլիոն տոննի, այսինքն՝ Ուկրաինան կմշակի ավելի շատ մետաղ, քան մեր ամբողջ յերկիրը պետք է արտադրեր 1932 թվին:

Սխառ կաճի քիմիական արդյունաբերությունը, մանավանդ ազոտային արտադրությունն ու Փոսֆորիայային պարարտանյութերի արտադրությունը:

Հսկայական աճում կտա մեքենաշինարարության համար պետական՝ վորակյալ մետաղի արտադրությունը:

Հովհաննէս չարիքի աճումն և մեքենայինարարութիւնը, լեռնադործարանային սարքավորումը, վորը պետք է արտադրվի հին ու նոր կրամատորջան գործարաններում, շոգեշարժերի շինարարութիւնը, վորն իրադրծվելու յե հին ու նոր Լուզանյան գործարաններում ու Պարկովի շոգեշարժային գործարանում, վազմաների շինարարութիւնը «Պրավդայի» անվան գործարանում, նախաշինարարութիւնը նիկոլայեփոկի գործարանում, Ողեստայի ու Սեաստայի գործարաններում և Մարիուպոլի նոր գործարանում՝ արտադրող-շինարարութիւնն ու ելեկտրամեքենայինարարութիւնը:

Յիմիական ազարատւրան արտադրվելու յե գլխավորապէս կիւնի «Բայլչեիկ» գործարանում. պետք է ծավալվի շաքարի գործարանների սարքավորման արտադրութիւնը:

Թեթիւ արդյունաբերութեան նկատմամբ զարգանալու յե շաքարը, վուչը, մսի, բամբակի արդյունաբերութիւնը՝ բամբակուցան նոր ուսյոններում:

Լի բեռնափորումով աշխատելու յին դնկարյան հիւրոկայանը և դնկարյան կոմբինատը, վորը հսկայական մուծում կլինի Սորհրէային Միութեան տնտեսութեան մեջ և իրատ կիւնի Ուկրայնայի տնտեսութիւնը:

Յերկաթուղային շինարարութիւնը կընթանա ելեկտրիֆիկացման ուղղութեամբ, յերկրորդ (զուգահեռ) յերկաթգծերի, տեսակափորման կայարանների սարքավորման ու նոր յերկաթուղային շինարարութեան ուղղութեամբ:

Ուկրայնայի գյուղատնտեսութիւնը պետք է զարգանա նույն ուղղութեաններով, ինչ յեղել և մինչև այժմ, աշխինքն՝ հացահատիկային, ցորենի տնտեսութեան հետ միասին Ուկրայնան պետք է ամելացնի տեխնիկական մշակույթների արտադրութիւնը՝ թե՛ շաքարի ճակնդեղի և թե՛ կանեփի ու բամբակի բնագալտոններում:

### ԲԵԼՈՒՌՍԻԱ

Յերկրորդ հնգամյակում Բելոռուսիայի տնտեսութեան զարգացումը հիմնվելու յե կիլզահողի (տորֆի), անտառի ողտադործման և գյուղատնտեսութեան ինտենսիվ զարգացման բազայի վրա:

Բելոռուսիայի գյուղատնտեսութեան հիմնական ուղղութեանն է՝ մեքենային կենդանարուծութիւնը, թռչնարուծութիւնը, տելի-

նիկական մշակույթները, մասնափորապէս՝ կտափաան ու դեռնախնձորը (կարտոֆիլ):

Թեթիւ արդյունաբերութեան համար այդ հումույթային բազայի խոշոր աճումը հնարափորութիւն և տալիս ծրագրելու թե՛ անդամթերային և թե՛ կտափատի բնագալտոնում մշակվող արդյունաբերութեան զգալի զարգացում:

Աճում է կիլզահողի արդյունահանումը: Բելոռուսիայում ծրագրվում է կառուցել կիլզահողային-քիմիական գործարան: Զարգանում է կիլզահողով ելեկտրոններգիայի արտադրութիւնը:

Արդյունաբերական շինարարութեան առանձին ձեռնարկութիւններից հարկափոր է նշել շինարարութիւնը կիլզահողային-քիմիայի, թղթի, փայտամշակման, անտառաքիմիական արտադրութեան, վուչի նախնական ու հետագա մշակման բնագալտոններում (մանածաղործութիւնն ու ջուլհակութիւնը):

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍՍ

Անդրկովկասը զարգանալու յե հիմնականում նույն դժեբով, վոր նշվել են արդեն առաջին հնգամյակում՝ մասնափորապէս՝ նրա գյուղատնտեսութիւնն ընթանալու յե նույն տեխնիկական մշակույթների զարգացման դժով, վորոնք հատուկ են տեղական կլիմային (ամենից առաջ՝ բամբակը) և մի շարք այլ մերձտորպիկական մշակույթների տարածումը-թե՛ և այլն:

Միանգամայն ակնհայտ է, վոր այնպիսի մշակույթների զարգացման խնդիրը նույնպէս, ինչպիսին է խաղողի, նարնջի, մանդարինայի զարգացումը, պետք է դրված լինեն Անդրկովկասի առաջ, ինչպէս նաև լիմոնի պլանտացիաների զարգացումը: Համենայն պէս այս հնգամյակում մենք ունենալու յենք այնպիսի գրութիւն, յերբ վոչ խաղողը, վոչ նարնջը վոչ մանդարինային համարվելու շուրջութեան առարկա, այլ նրանք լինելու յեն մասնախական սոցաման առարկա, և այդ մշակույթների վրա կատարած աշխատանքն Անդրկովկասի համար հանդիսանում է շափազանց կարևոր աշխատանք, Միութեան ամբողջ ժողովրդական տնտեսութեան տեսակետից:

Սոչոր արդյունաբերութեան զարգացումն Անդրկովկասում ընթանալու յե չափազանց ինտենսիվ կերպով, վորի հետևանքով մենք ունենալու յենք այդ յերկրի նշանակալից ինդուստրացումը: Նախքի արդյունահանումն Անդրկովկասի նոր ուսյոններում

պետք է հասնի 10 միլիոն տոննի (բայց Բազլից) : Գուցե և այդ նախագիծը չափազանց մեծ է , այդ նախագիծը պետք է յենթարկվի մեծամեծ ճշտումների , բայց և այնպես զրա հնարավորութուններն այնտեղ կան :

Քարծախի արդյունահանումն Անդրկովկասում հասնում է մինչև 3 միլիոն տոննի (Տիվարձելին ու Տիվրուլին) , զարգանում է լեռնարդյունաբերութունը , դուռավոր մետաղը , պղինձը Ջանգղուբում , սկունդիտներեց ալյումինն Ադրբեջանում , զարգանում է թեթև արդյունաբերութունը՝ վերամշակելու համար այն հումույթը , վորն արտադրվում է Անդրկովկասի տերիտորիայում :

Առանձնապես մեծ նշանակություն է ստանում Գաչքեսանի մետաղաձուլական գործարանի կառուցումը , վորը չուգունի արտադրության հետ միասին կունենա խողովակային ցեխ՝ խողովակներ մատակարարելու համար Բազլի և ընդհանրապես Անդրկովկասի նավթարդյունաբերությանը . մյուս կողմից՝ նա մետաղ է տալու Անդրկովկասում յեղած բավական խոշոր մեքենաշինարարությանը , վորն աննկատելիորեն աճել է առաջին հնդամյակի տարիներում (ընկ . Շմիդտի անվան գործարան և այլն) :

Քիմիայի բնագավառում կառուցվում են Փոսֆորիտային ու աղտային պարարտանյութերի ձեռնարկութուններ :

Խոշոր զարգացում է ստանում շինանյութերի արդյունաբերությունը՝ ցեմենտ , տուֆ և այլն :

Տեքստիլը զարգանում է բամբակադորձական արդյունաբերության ու մետաքսի դժով :

ԱնՊՄՀ հուժկու ենրդետիկ բազա յե ստանում մի շարք հիդրոկայանների միջոցով : Վորպես հնարավոր կետեր , այստեղ կրեքենը՝ Գեյսեքը-Մինգեչաուրը , Սրամը , Քախախ-Գյումուչը և այլն :

Խնդիրները տրանսպորտի բնագավառում չեն սպառվում ելեկտրիֆիկացման խնդիրներով : Այստեղ հավանորեն հարկ կլինի կառուցել մի շարք լրացուցիչ յերկաթուղիներ :

### ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

Միջին Ասիան վերջնականապես վերափոխվում է , դառնալով յերբևմնի ցարական իմպերիալիզմի հետամնաց զաղութից ԽՍՀՄ բամբակի մատակարարման հիմնական աղբյուրը և միևնույն ժամանակ՝ նաև ինդուստրիալ մի կենտրոն , վոր ապահովում է Միջին

Ասիայի բնակչությանը սպառման հիմնական աղբյուրներով և մատակարարում է մինչև իսկ ԽՍՀՄ արտադրական սպառման չափազանց կարևոր առարկաներով :

Վորպես ենրդետիկ բազա ծառայում են՝ քարածուխը , վորի արդյունահանումը պետք է 1937 թվին հասնի 10 միլիոն տոննի , նավթը , վորի արդյունահանումը հնդամյակի վերջում պետք է հասնի 3 միլիոն տոննի և մի շարք հիդրոկայաններ՝ Չիրչիկ , Բախչ և ուրիշները : Այդ բազայի վրա զարգանում է դուռավոր մետաղաձուլությունը՝ պղինձը , ցինկը , կապարը : Քիմիան-սենից առաջ՝ կապովի աղտի քիմիան է : Չարգանում է հանածոների արդյունահանումը՝ ծծումբը , սնդիկը , ադրեսաը , բորխան , մինդեղը , մոլիբդենը , լյապիս-լազուրը , հելիան , վորն անհրաժեշտ է անրոստատների համար և այլն :

Բամբակադորձության աճման հետ միասին զարգանում է մետաքսադորձությունը , կենդիլի , կենաիի ցանքերը , աճում է կաուչուկաբեր բույսերի տարածությունը :

Աճում է կենդանարուծությունը : Գյուղատնտեսական համույթի ստեղծվող բազայի վրա կառուցվում են շալեղենի գործարաններ , կենդիլ-կետինյան կոմբինատ , մեծ ունակությամբ բամբակադորձական կոմբինատ , մետաքսակարժ , շաքարի , պահածոների գործարաններ և այլն :

Չափազանց մեծ խնդիրներ են առաջադրվում յերկաթուղային շինարարության բնագավառում : Այստեղ ծրագրվում է կառուցել մի շարք նոր մազիստրալներ :

### ԿԱԶԱԿՍՏԱՆԻ ԽՍՀ

Կազախստանի ԽՍՀ շարունակում է դառնալ հետամնաց բայնից ԽՍՀՄ խոշոր արդյունաբերական ու դյուղատնտեսական կենտրոնը : Կարագանդի վառելանյութային ուսյոնի զարգացման հիման վրա , վորի քարածխի արդյունահանումը հասնելու յե մինչև 15 միլիոն տոնն քարածխի , ելեկտրոներգիայի հիման վրա , աճում է դուռավոր մետաղաձուլությունը՝ Կոուեդբադ , Ջեզկադգոն , Ալտայան գործարան , Ռիդդեր , Կազդուլխա մետաղ և այլն : Չարգանում է քիմիան , մասնավորապես՝ ծծմբութթվուտի արտադրությունը :

Կազախստանում պիտի ձեռնարկվի յերկաթուղային մեծ շինարարություն :

Նախատեսվում են այնպիսի յերկաթուղային ուղղություններ, ինչպիսիք են՝ Կարազանդ—Բալխաչ, Բալխաչ-Չու—Կարազանդ-Սեմիապալատինսկ և այլն: Ավելանում է բամբակի և տեխնիկական այլ մշակույթների, մասնավորապես՝ կաուչուկաբեր մշակույթների արտադրանքը:

Հացահատիկային մշակույթների աճման հետ միասին ստեղծվում է սոցիալիստական խոշոր կենդանաբուծություն:

Այդ հումուլթային բազայի վրա պետք է կառուցվեն բամբակամշակ, շաքարի, կշափի, կենսաֆ-տոպրակների, շալիզների, պահածոների և այլ գործարաններ և ձեռնարկություններ:

### ԲԱՇԿԻՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բաշկիրյան հանրապետությունը գտնվում է Ուրալում և սերտորեն կապված է Ուրալ-Սիբիրիցյան կոմբինատի հետ: Բաշկիրյան հանրապետությունում զարգանում է խոշոր արդյունաբերություն:

Այն մետաղաձուլական արտադրությունը, վոր գտնվում է այնտեղ հանձինս Բելոբեգյան գործարանի, ավելանում է Կոմարով-Ձիգադինյան նոր հուժկու գործարանը, վորն ունի բոլոր ավյալները յերկրորդ հնգամյակի պլանի մեջ մտնելու և յերկրորդ հնգամյակում ավարտվելու համար:

Սակայն, բացի դրանից, զարգանում է նաև գունավոր մետաղաձուլությունը: Այդ հումուլթի հիման վրա նպատակահարմար է Բաշկիրիայում սկսել ուժեղ տեմպով զարգացնել մեքենաշինարարությունը:

Ըստ յերևույթին այնտեղ կկառուցվի երկարուշարժերի գործարան՝ յերկաթուղիների վերակառուցման համար:

Այնտեղ կառուցվելու յե մոտորային խոշոր գործարան: Ըստ յերևույթին, յերբ ջննարկվի մեծ կաթաս-տուրբինային գործարանի շինարարության համար տեղի հարցը, շինարարության կետը կընտրվի Բաշկիրիայում:

Դրա հետ միասին զարգանում է նաև աճող գյուղատնտեսությունը հիման վրա թեթև սննդամթերային արդյունաբերությունը:

### ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թաթարական հանրապետության մեջ նախատեսվում է կառուցել սինտետիկ կաուչուկի գործարան, հավանորեն կկառուցվի

ավիացիոն մոտորների գործարան, յեմենա-թթվառային տուկուլյան կոմբինատ՝ Կամայի գետաբերանին: Համապատասխան հումուլթի հիման վրա նախատեսվում է կառուցել պլաստիկ մասսաների գործարան: Չարդանում է փայտամշակման գործը և ընդհանրապես անտառային գործը: Այդ ձեռնարկություններն ու գործարաններն են երգիան պիտի ստանան Վոլգա-Կամայի հիդրոկայանից:

### 7. ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կարդա ստորև բերված հատվածը և ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ հետևյալ հարցերին.

ՎՈՐՆ Ե ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՇԵՍԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցությունն ու Նորհրդային Իշխանությունը ձեռք են առնում բոլոր միջոցները՝ իրացնելու համար գործնականապես փաստացի անհավասարությունը, և աղբային հանրապետությունները, վորպես Նորհրդային մեծ Միության մասերը լի թափով ընթանում են դեպի սոցիալիզմ:

Լենինի հանրաժանութ այն դրությունը, թե «հետամնաց ուսյունները կարող են սոցիալիզմին անցնել, խուսափելով զարգացման կապիտալիստական շրջանը», լիովին արդարացել է աղբային հանրապետությունների սոցիալիստական շինարարության պրակտիկայում:

Ընկ. Ստալինն այսպես է ասել մեր աղբային քաղաքականության մասին, «բանն այն է, վոր մեր հանրապետության Միության վրա ամբողջ Արևելքը նայում է վորպես փորձադաշտի վրա: Կամ մենք այդ Միության շրջանակներում ճիշտ կլուծենք աղբային հարցը նրա պրակտիկ կիրառումով, կամ մենք այստեղ, այդ Միության շրջանակներում ժողովուրդների միջև կհաստատենք իրոք յեղբայրական հարաբերություններ, իսկական աշխատակցություն, և այն ժամանակ ամբողջ Արևելքը կտեսնի, վոր հանձինս մեր Ֆեդերացիայի նա ունի ազատագրման դրոշ, ունի առաջավոր ջոկատ, վորի հետքերով նա պետք է ընթանա, և այդ կլինի համաշխարհային իմպերիալիզմի կրախի սկիզբը: Կամ մենք

այստեղ, ամբողջ ֆեդերացիայի կազմի մեջ, թույլ կտանք սխալ, կխախտենք առաջնորում ճշգրիտ ժողովուրդների վստահությունը դեպի Ռուսաստանի պրոլետարիատը, կխլենք հանրապետությունների Միությունից այն ձգողական ուժն Արևելքի աչքում, վոր նա ունի, և այն ժամանակ կշահի իմպերիալիզմը, տանուղ կտանք մենք: Այդ է ազգային հարցի միջազգային նշանակությունը»:

Մենք, Խորհրդային իշխանության ամբողջ գոյությունը ընթացքում, լենինյան լուծել ենք ազգային հարցը և այդպիսով իսկ դարձել ձգողական ուժ՝ աշխարհի բոլոր պրոլետարների ու ճնշված ժողովուրդների համար:

### 8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ ՅԵՂԱԾ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Ընդ. Ստալինի գեկուցումից ստորև բերված հատվածով ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԻՆ

ՎՈՐՆ Ե ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՑՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ԻՆՉՈՒ ԵՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԽՆԱ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Վեյքիստուսական շովինիզմի թեքման եյությունն այն է, վոր նա ձգտում է անտեսել լեզվի, կուլտուրայի ու կենցաղի ազգային տարբերությունները, ձգտում է պատրաստել ազգային հանրապետությունների ու մարդերի վերացումը, ձգտում է խախտել ազգային իրավահավասարության սկզբունքը, պսակազերծ անել հուսակցությունների քաղաքականությունը՝ ապարատի, մամուլի ազդանացումը, դպրոցների և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների ազգայնացումը:

Դժվար չէ հասկանալ, վոր այս թեքումը (մեծապետական շովինիզմի թեքումը) արտացոլում է առաջներում տիրապետող վեյքիստուս ազգի մահացող դասակարգերի ձգտումը՝ վերադարձնելու իրենց կորցրած արտոնությունները:

Այստեղից ծագում է վեյքիստուսական շովինիզմի վտանգը, վորպես գլխավոր վտանգ կուսակցության համար ազգային հարցի ապարիզում:

Տեղական նացիոնալիզմի թեքման եյությունը հետևյալ ձգտման մեջ է. առանձնանալ և պարտիակվել իր ազգային կեղևի շրջանակների մեջ, քողարկել դասակարգային ներհակությունը:


ներն իր ազգի նրսում, պաշտպանվլ վլլիկոուսական շովինիզմից՝ սոցիալիստական շինարարության ընդհանուր հոսանքից հեռանալու միջոցով, չտեսնել այն, ինչը մերձեցնում է միավորում և ԽՍՀՄ աշխատավորական մասսաներին, և տեսնել միայն այն, ինչ կարող է հեռացնել նրանց միմյանցից:

Տեղական նացիոնալիզմի թեքումն արտացոլում է առաջներում հարստահարված ազգությունների մահացող դասակարգերի զժգոհությունը պրոլետարիատի դիկտատուրայի ուժից, նրանց ձգտումն՝ առանձնանալու իրենց ազգային պետության մեջ, հաստատելու իրենց դասակարգային տիրապետությունը:

Կուսակցությունը պետք է ուժեղացնի պայքարն ազգային հարցում յեղած այդ յերկու թեքումների և այդ թեքումների նկատմամբ հաշտվողականության դեմ, միաժամանակ ուժեղացնելով ուշադրությունը դեպի լենինյան ազգային քաղաքականության պրակտիկ կիրառումը, վերացնելով ազգային անհավասարության տարրերը, և դեպի Խորհրդային Միության ժողովուրդների ազգային կուլտուրաների լայն զարգացումը:

### ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես է վերացվում ԽՍՀՄ ազգությունների փաստական եյութական ու կուլտուրական անհավասարությունը:
2. Ինչպիսի՞ք են մեր նվաճումներն ազգային հանրապետությունների ու մարդերի ինդուստրացման ասպարիզում:
3. Ինչպիսի՞ք են ազգային հանրապետությունների ու մարդերի դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նվաճումները:
4. Վ՞որոնք են ազգային ծայրամասերի կուլտուրական շինարարության հաջողությունները:
5. Վ՞որոնք են ազգային հանրապետություններում սոցիալիստական շինարարության պլանները յերկրորդ հնգամյակում:
6. Վ՞որն է ազգային հանրապետությունների սոցիալիստական շինարարության հաջողությունների համաշխարհային նշանակությունը:
7. Վ՞որն է մեծապետական շովինիզմի եյությունը և ինչո՞ւ մեծապետական շովինիզմի թեքումը կուսակցության մեջ գլխավոր վտանգ է հանդիսանում ազգային հարցում:
8. Վ՞որն է տեղական նացիոնալիզմի դասակարգային եյությունը:



Սրբազրէց Գար. Հակոբյան

Գեորգիանի տպարան

---

Հրատ. 2174, պատկեր 240, գլ. 8051 (բ), տիրած 2000

«Ազգային գրադարան»



NL0199803

ԳԻՆԸ 60 Կ.

**Национальная политика ВКП (б) и советской власти**  
Госиздат, СССР—Эривань 1936